

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՆԿՐԵՍԻ ԲԱՄԲԵՐ ԼԵՒՈՆ ԶՈՒՐԱԲԵԱՆԻ ՍԱՍՆՈՅ ԱՍՈՒԼԻՍԸ



Տ.Ա.Գ.

Հայաստանի Հայ Ազգային Գոնկրեսի ներկայացուցիչներէն Լեւոն Զուրաբեան, շաբաթէ մը ասպիտակ ատեն Գալիֆորնիա: Ընթացիկ շաբաթուան Երկուշաբթի 31 Օգոստոս 2009ին, ժամը 2.30ին, ան տուաւ մամուլի ասուլիս մը Կլենտոնի շիֆթոն պանդոկի մէջ, որուն ներկայ գտնուեցան մեր մամուլի, հեռուստատեսիլի եւ կարգ մը կառույցներու ներկայացուցիչներ:

Պրն. Զուրաբեան, պարզ, հաղորդական եւ փաստական տուեալներով քննարկումի տակ առաւ Հայաստանի ներկայ տխուր այլ

Շաբ.ը էջ 19

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒ ՀԱՇՎՈՅ ԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ ԶԻՋՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԹՈՒՐԹԻԱ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻՆ ՀԱՍՏԱՏԵԼ ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայ ժողովուրդի պատմական իրաւունքներու Հաշույն կատարուած միակողմանի գիշումներուն շնորհիւ, ներառեալ Յեղասպանութիւնը կասկածի տակ առնող յանձնաժողովի ստեղծումը եւ սահմաններու վերջնական ճանաչումը Հայաստան եւ Թուրքիա համաձայնութեան Զուլիցերիոյ միջնորդութեամբ տեղի ունեցող բանակցութիւններու ընթացքին համաձայնութեան եկած են վեց շաբաթուայ ընթացքին դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու շուրջ:

Օգոստոս 31-ին Զուլիցերիոյ, Հայաստանի եւ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնները տարածեցին մամուլի հաղորդագրութիւն կապուած հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորման ընթացքին: Հաղորդագրութեան մէջ ըսուած է.

«Հայաստանի Հանրապետութիւնը եւ Թուրքիայի Հանրապետութիւնը համաձայնեցին սկսել ներքին քաղաքական խորհրդակցութիւններ՝ գոլիցերական միջնորդութեամբ իրականացուող բանակցութիւններ ընթացքում նախատրագրուած հետեւեալ երկու արձանագրութիւններ շուրջ. «Արձանագրութիւն երկու երկրների միջ-դիւանագիտական յարաբերութիւնների հաստատման մասին» եւ «Արձանագրութիւն երկկողմ յարաբերութիւնների զարգացման մասին»:

սին»:

Յիշեալ երկու Արձանագրութիւնները կը սահմանեն տրամաբանական ժամկէտի մէջ երկկողմ յարաբերութիւններու կարգաւորման շրջանակ: Ներքին քաղաքական խորհրդակցութիւնները կ'աւարտին վեց շաբաթուայ ընթացքին, որմէ յետոյ երկու Արձանագրութիւնները կ'ստորագրուին եւ կը ներկայացուին երկու երկիրներու խորհրդարաններուն՝ վաւերացման համար: Երկու կողմերը կը գործադրեն իրենց առաւելագոյն ջանքերը վաւերացման արագ յառաջընթացի համար՝ համաձայն իրենց սահմանադրական եւ օրէնսդրական գործընթացներուն:

Հետաքրքիր է լինել, որ նոյն օրը առաւօտեան Սերժ Սարգսեան BBC-ին տրուած հարցազրոյցի մը ընթացքին եւ պատասխանելով հայ-թրքական յարաբերութիւններու մասին հարցումի կասկածով մօտեցած էր թրքական կողմի անկեղծութեան. «Մենք ունենք պայմանաւորուածութիւններ, եւ ես կարծում եմ, որ նորմալ եւ ճիշդ ճանապարհը այն է, երբ կողմերը կատարում են իրենց պայմանաւորուածութիւնները: Ցաւօք, ես մինչ օրս չեմ տեսել մեծ ցանկութիւն կամ ձգտում այդ պայմանաւորուածութիւնների կատարման»:- BBC-ին ըսած էր Սերժ Սարգսեան:

Հայ-թրքական համաձայնութեան կապակցութեամբ յայտարարութիւններով հանդէս եկան աւան-

դական երկու կուսակցութիւններ՝ ՄԴՀԿ եւ ՀՅԴ մերժելի ու անընդունելի նկատելով հրապարակուած երկու արձանագրութիւններու բովանդակութիւնը:

Հայաստանեան բազմաթիւ կուսակցութիւններ եւ կազմակերպութիւններ եւս հայկական կողմի գիշում նկատեցին հրապարակուած փաստաթուղթերը:

Բնականաբար, հայ-թրքական համաձայնութիւնը ողջունեցին միջազգային կառույցներուն ու շարք մը երկիրներ, գլխաւորութեամբ Ամերիկայի Միացեալ Նահանգներու գլխաւորութեամբ:

«Միացել Նահանգները ջերմօրէն կ'ողջունէ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ այսօր հրապարակուած միատեղ յայտարարութիւնը, Զուլիցերիոյ մասնակցութեամբ, յստակացնելով հետագայ քայլերը՝ իրենց երկկողմ յարաբերութիւններու գծով»:- յայտարարած է Պետական Գրասենեակի բանբեր Իյան Քէլլի:

Համաձայնութիւնը ողջունեց նաեւ Եւրոպայի Միութեան դեկավարներէն Խալիէր Սոլանա, որ գայն որակեց՝ «կարեւոր քայլ մը երկկողմանի յարաբերութիւններու բնականոնացման մէջ»:

Հակառակ միջազգային այս լաւատեսութեան, հայաստանեան որոշ շրջանակներու կարծիքով, համաձայնագրի վաւերացումը կրնայ ձգձգուիլ թրքական խորհրդարանին կողմէ:

Ս. Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՅ-ԹՐԹԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

Օգոստոս 31-ին հրապարակուեցան Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ երկու արձանագրութիւններ՝ յարաբերութիւններու զարգացման եւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման շուրջ: Այդ փաստաթուղթերու յուրջուսումնասիրութիւնը կու գայ ցոյց տալու, որ սկսած է Հայաստանի միակողմանի գիշումներ եւ ամբողջական անձնատուութիւն պարտադրելու անբախտ զործընթացը:

Այսպէս՝
Ա.- Հաւասարութեան, ինքնիշխանութեան եւ այլ պետութիւններու ներքին գործերուն չմիջամտելու, տարածքային ամբողջականութեան ու սահմաններու անխախտելիութեան սկզբունքները յարգելու իրենց երկկողմ ու քաղաքական պարտաւորութիւններու վերաբերեալ կ'ետով, Հայաստան փաստօրէն կ'ընդունի Արցախը Ատրպէյճանի կազմին մէջ ձգելու պարտաւորութիւնը:

Բ.- Խօսելով երկու ժողովուրդներու միջեւ փոխվստահութեան վերականգնման եւ երկխօսութեան միջոցով պատմական արխիւներու ուսումնասիրութեան միջոցով գոյութիւն ունեցող խնդիրներու յստակեցման մասին, Հայաստան կը համաձայնի Յեղասպանութեան նախնական հարցը փակել, բաւարարելով յանձնաժողովի քննարկումներով:

Գ.- Վերահաստատելով երկու երկիրներու միջեւ գոյութիւն ունեցող ընդհանուր սահմանի փոխադարձ նախնական, Հայաստան կը համաձայնի նախնական հայութեան պարտադրուած Կարսի պայմանագիրը:

Ցարդ կը խօսուէր առանց նախապայմաններու, հայ-թրքական յարաբերութիւններու հաստատման մասին, սակայն այս արձանագրութեան ամբողջ բովանդակութիւնը մեզ կը յուշէ, որ սահմանի քաղաքական դիմաց շատ սուղ գին պիտի վճարէ, որչա՞ք հայ ժողովուրդը: Եթէ սահմանի քաղաքական եւ միջպետական յարաբերութիւններու հաստատման գիւնը



պիտի ըլլայ ճեղասպանութեան փաստը կասկածի տակ առնելը եւ միջպետական պատմաբաններու յանձնախումբի ստեղծման միջոցով Մեծ եղեռնի ուրացումը, ապա գայն պէտք է դիտարկել որպէս մեծ դաւանանքի մեր ամեն գոհներու յիշատակին ու համայն հայութեան նկատմամբ:

Ընդունելով ու վաւերացնելով հայ-թրքական նախապահային փառաբան, Մեր ժողովուրդին կը պարտադրուի ոչ միայն հրաժարիլ մեր տարածքային պահանջատիրութեան, այլ նաեւ՝ կը քաղաքէ Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան հետագայ մասնակցութիւնը բանակցային գործընթացին եւ Արցախի նկատմամբ կանխորոշուած՝ առանց անգամ արցախահայութեան կամքի նկատի առնելու:

Մեմֆրազմիցս յայտարարած ենք, որ Հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորումը չի կրնար իրականացուիլ առանց Սփիւռքի մասնակցութեան, Բանգի այսօրուայ Սփիւռքի գոյութիւնը հիմնականին մէջ պայմանաւորուած է Թուրքիոյ կողմէ իրականացուած Յեղասպանութեամբ: Առանց հաշուի առնելու հայ ժողովրդի հաւաքական կարծիքը, Հայաստանի իշխանութիւնները մեզ կը դնեն անհեռանկար ու վտանգաւոր կացութեան մը մէջ:

Հետեւաբար, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան համար մերժելի են ներկայացուած փաստաթուղթերը ու մեմֆրազմ ստեղծող գործակցելու մեր ազգի քաղաքացիք բոլոր տարրերուն հետ, տապալելու համար այս համաձայնագրերու վերջնական վաւերացումը:

ՏԵՍԱԿԵՏ

ՕՐՈՒԱՅ ԸԱՐՑԵՐՈՒՆ ԸՏ

ՍԻՊԵԼ ԷՏՈՆՏՁ ԵՒ ԹՐՔԱԿԱՆ ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄԸ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՎԱՐՉԱՄԵՔԵՆԱՅԷՆ ՆԵՐՍ

Նախորդ դարու 70-ական թուականներին սկսեալ Պարսկաստանին, Միջին Արեւելքին եւ ապա Հայաստանին գաղթած հայեր հերթաբար ձեռք ձգեցին ամերիկեան հպատակութիւն եւ հետեւաբար դարձան քուէարկողներ: Նորերը, գուժարուելով նախկին Ամերիկահայերու ունեցած քաղաքական կապերուն ու փորձառութեան վրայ, հայութիւնը աճեցաւ բաւական ազդեցիկ ընտրական գանգուածի մը, քաղաքական կեանքին ներս հասնելով որոշ յաջողութիւններու: Հայկական կազմակերպութիւնները դարձան նշմարելի ներկայութիւն գոնկրէսական շրջանակներէն ներս ու հայ ընտրողներու թիւն ու տեսակէտները աւելի յաճախ նկատի սկսան առնուել քաղաքական պաշտօններու ձգտող տարբեր թեկնածուներու կողմէ:

Այս բոլորով հանդերձ, Ամերիկահայութիւնը չկարողացաւ հասնիլ իր հիմնական նպատակներէն մէկուն՝ Հայկական Յեղասպանութեան բանաձեւի ընդունման եւ նախագահական մակարդակով անոր ճանաչման: Յարդ տիրող կարծիքը այն էր թէ, ամէն անգամ երբ Բանաձեւը դուրս գար Գոնկրէսի տարբեր յանձնաժողովներէն ու կը դրուէր Ընդհանուր Ժողովի օրակարգին վրայ, վերջնական քուէարկութիւնը տեղի չէր ունենար, Թրքական կառավարութեան սպառնալիքներուն պատճառ:

Վերջին շրջանին սակայն, ի յայտ կու գան մտահոգիչ նորութիւններ, որոնք ցոյց կու տան թէ, թրքական ներթափանցումը ամերիկեան քաղաքական կեանքին ներս շատ աւելի խորը եղած է քան կը կարծուէր:

Սիպէլ էտմոնսոգ մինչեւ օրս կը մնայ անձանօթ անուն մը շատերու համար: Իր մասին կը խուսափին խօսելէ ամերիկեան մեծագոյն թերթերն ու հեռատեսիլի ալիքները: Յարդ իր հարցը կ'արձարծեն միայն յառաջդիմական «Pacifica» եւ «Air America» ռատիոկայանները ու ձախակողմեան կայքէջերը:

Ո՞վ է Սիպէլ էտմոնսոգ: Ան ամերիկահայաստակ թրքուհի մըն է որ աշխատած է FBI-ի մօտ, որպէս մասնագէտ թարգմանիչ եւ պաշտօնի բերումով ծանօթացած է գաղտնի փաստաթուղթերու: 2002 թուականի Մարտին ան վտարուած է պաշտօնէն, իր գործակիցներէն մին ամբաստանելէ ետք՝ կատարուող ապօրինութիւնները ծածկելու մէջ:

էտմոնսոգի համաձայն, օտար ազգութեամբ մարդիկ, մեղսակից ունենալով ամերիկացի պաշտօնեաներ, մասնակից են հետախուզական գործունէութեան մէջ, որոնք կը վտանգեն Ամերիկայի ազգային ապահովութեան: Ան յատկապէս մեղադրած է թրքական եւ իսրայէլեան կառավարութիւնները միջուկային գաղտնիքներու տիրանալու փորձերուն մէջ:

Պաշտօնէն վտարման առթիւ բացուած դատական երկու հարցեր առկա մնացած էին, երբ նախագահ ձորձ Պուշի կառավարութիւնը արգիլած էր Սիպէլ էտմոնսոգին վկայութիւն տալ, առարկելով թէ, օրէնքով FBI-ի նման գաղտնի սպասարկութեանց նախկին անդամները իրաւունք չունին իրենց մօտ եղած տեղեկութիւնները հրապարակելու:

ընդհանուր առմամբ Վերջերս Սիպէլ էտմոնսոգ ներգրաւուեցաւ դատական այլ գործի մը մէջ: Օհայօ նահանգի գոնկրէսական, հանրապետական ձին Շմիթ դատ բացած էր մրցակից Տէյվիտ Գրիգորեանի դէմ, այս վերջինը մեղադրելով սուտ լուրեր տարածելու մէջ: Նախորդ ընտրութիւններու ընթացքին, Գրիգորեան յայտարարած էր թէ, ձին Շմիթ «արիւնով թախուած» դրամական օժանդակութիւն կը ստանայ թրքական աղբիւրներէ:

Տէյվիտ Գրիգորեան իր մեղադրանքներուն տէր կանգնելով, որպէս վկայ կանչած էր Սիպէլ էտմոնսոգին: Նախադատական վկայութիւնները արձանագրելու համար, նշանակուած էր 8 Օգոստոս թուականը: Մտաւարտութիւն կար, որ ամերիկեան կառավարութիւնը դարձեալ պիտի խափանէր էտմոնսոգի վկայութիւնը: Սակայն, Օպամայի վարչակարգը նման քայլի չէր ձեռնարկէր Գրիգորեանի փաստաբանները յաջողեցան ձեռք ձգել տեղեկութիւններ՝ Թուրքիոյ հետ մեղսակից բարձրաստիճան պաշտօնեաներու մասին: Սիպէլ էտմոնսոգ չի շեց անունները թուրք կառավարութեան օգտին աշխատողներու, որոնք, իրենց ապօրէն գործունէութեան համար պէտք էր ենթարկուած ըլլային դատական հետապնդումներու:

էտմոնսոգի կողմէ չիշուած անուններու շարքին են Ներկայացուցիչներու Տան խօսնակ Տէնիս Հէսթըրթ, գոնկրէսականներ Տէն Պըրթըն, Ռոյ Պլանթ, Պոպ Լիվինքսթըն, Ստէֆան Սոլարզ, եւ Թոմ Լանթոս: Ասոնցմէ ոմանք արդէն իսկ Գոնկրէսի նախկին անդամներ են եւ առնուազն երկուքը՝ Տէնիս Հէսթըրթ եւ Պոպ Լիվինքսթըն պաշտօնէն դուրս գալէ ետք՝ դարձած են թրքական կառավարութեան բացառապէս գործակալներ եւ վարձուած են, Սիպէլ էտմոնսոգի հանդերձն ներս պաշտպանելու համար թրքական շահերը:

էտմոնսոգ աւանց անունը տալու խօսած է նաեւ Գոնկրէսի անդամուհի մը մասին, որ միասեռական յարաբերութեան մը ընթացքին, գաղտնի կերպով վիտիոյի արձանագրուելէ ետք ենթարկուած է շանթաբռն: Այդ անունը դժուար չէ կուսակցութեան վերջինքն Քալիֆորնիայէն դեմոկրատ գոնկրէսականի մը պարագան, որ վերջերս, անակնկալօրէն փոխելով իր դիրքորոշումը, հակադրուեցաւ Հայկական Յեղասպանութեան բանաձեւին:

Թուրք կառավարութեան ծառայող, Պուշի վարչակարգի բարձրաստիճան պաշտօնեաներու շարքին, որոնց մասին խօսած է FBI-ի նախկին թարգմանիչը, կան անունները Փոլ Ուլֆուիթցի, Տուկլըս Ֆիթի, Մարք Կրոմընի եւ ուրիշներու, որոնք հանրապետական վարչակարգերու օրով մեծ ազդեցութիւն ունեին ամերիկեան քաղաքականութեան վրայ:

Սիպէլ էտմոնսոգի բացառապէս տուածները կու գան փաստելու թէ, թրքական կառավարութիւնը հայութեան դէմ կը պայքարի ոչ թէ միջպետական յարաբերութիւններու մակարդակով միայն, այլ իր գինանոցին մէջ ունի տարբեր միջոցներ՝ ներառեալ կաշառքն ու շանթաբռն: Գ. ԽՈՏԱՆԵԱՆ

ՓՐԿԵԼ ԱՆՇՐՁԵԼԻՆ

Հայաստանի, Թուրքիայի եւ Շուէյցարիայի արտաքին գերատեսչութիւնների կողմից նախօրէին տարածուած յայտարարութիւնը եւ Հայաստանի ու Թուրքիայի միջեւ գիւտագիտական յարաբերութիւններ հաստատելու մասին նախաստորագրուած երկու արձանագրութիւնները երէկ ողջ օրուայ ընթացքում ոչ միայն Հայաստանի, այլեւ Թուրքիայի եւ Ադրբեյջանի համար քաղաքական թիւ մէկ եւ կարեւորագոյն թեման էր: Իհարկէ, այս երեք երկրներում կատարուածին տարբեր կերպ էին մօտենում, եւ արձագանքներն էլ շատ տարբեր էին, սակայն այս պահին ոչ թէ դա է կարեւոր, այլ այն, որ երէկուանից այս երկրների համար սկսուել է գրեթէ անշրջելի մի գործընթաց, որի աւարտի մասին հնարաւոր չէ միանշանակ կանխատեսումներ անել:

Ակնյայտ է, որ նշուած երեք երկրների իշխանութիւնների առաջիկայ վեց շաբաթուայ ընթացքում կամ միգրացիայի աւելի կարճ ժամկետներում արած քայլերից է բխելու այն արդիւնքը, որ նրանցից իւրաքանչիւրը վերջում կ'ունենայ:

Ասել է թէ՛ Հայաստանն էլ երէկ սկսուած գործընթացի վերջում կ'ունենայ այն, ինչ իշխանութիւնների վարած քաղաքականութեան, դիւանագիտութեան արդիւնքում հնարաւոր կը լինի ձեռք բերել: Սակայն այս առումով, ամենալաւատեսական գնահատականներով անգամ դժուար է յուսադրող կանխատեսումներ անել: Գիտակցելով, թէ ինչ ներքին եւ արտաքին քաղաքական հնարաւորութիւններ ունի Սերժ Սարգսեանն այսօր, ինչ աջակցութիւն ունի երկրի ներսում ժողովրդի եւ քաղաքական ուժերի կողմից, Արեւմուտքի եւ յատկապէս՝ մեծ երկրների, միջազգային կարեւորագոյն կառույցների առջ ինչ «պարտքեր» եւ «պարտաւորութիւններ» է ստանձնել՝ մէկուկէս տարի նախագահի պաշտօնը զբաղեցնելու դիմաց, պարզապէս անհնար է պատկերացնել, որ նախօրէին սկսուած գործընթացից Հայաստանն՝ իր այսօրուայ իշխանութեամբ, կարող է դուրս գալ յաղթած ու շահեկան վիճակում:

Ընդհանրապէս, երկրների պատմութեան ընթացքում լինում են խոշոր եւ անշրջելի իրադարձութիւններ, ու դրանք տուեալ երկրի ապագայի համար ունենում են բեկումնային նշանակութիւն՝ կամ լաւ, կամ վատ իմաստով: Այսինքն՝ որքան խոշոր ու պատմական է իրադարձութիւնն, այնքան փոքր է դրա՝ տուեալ երկրի եւ ժողովրդի կեանքում շարքային, հերթական ազդեցութիւնն ունենալու հնարաւորութիւնը: Թուրքիայի հետ դիւանագիտական յարաբերութիւնների հաստատումը Հայաստանի համար հենց այդպիսի խոշոր է բեկումնային կը լինէր այս կարող է բեկումնային դրական զարգացումները, որ այսօր առկայ է արձանագրութիւնները, որ այսօր առկայ է արձանագրութիւնները, որ այսօր առկայ է արձանագրութիւնները:

րաբերութիւնների հաստատումը Հայաստանի համար հենց այդպիսի խոշորագոյն իրադարձութիւն է: Սակայն արդեօ՞ք այն կարող է բեկումնային դրական հետեւանքներ ունենալ մեր երկրի եւ ժողովրդի համար: Թերեւս, բոլորովին այլ իրավիճակում կարելի կը լինէր այս հարցին դրական պատասխան տալ, սակայն այսօր նման հեռանկարը աւելի քան մշուշոտ է: Ու եթէ նոյնիսկ մի կողմ թողնենք բոլոր վերը բերուած ինդիկները, պէտք է արձանագրենք, որ այն քաղաքական միջոցառում, որ այսօր առկայ է Հայաստանում, ներքաղաքական այսպիսի լարուածութեան, հասարակութեան այսպիսի երկփեղկուածութեան պայմաններում կատարուած խոշոր եւ բեկումնային քայլերը քաղաքագիտութեան, դիւանագիտութեան, ընդհանրապէս՝ բնութեան բոլոր կանոններով կարող են ծառայել միայն ու միայն դիմացինի շահերին:

Եւ երէկ առնուազն իշխանութիւնների վերահսկողութիւնից դուրս գտնուող ՁԼՄ-ներով հրապարակուող՝ հասարակութեան տարբեր շերտերի՝ սոյն ինդիկի վերաբերեալ կարծիքները ցոյց էին տալիս, որ մեր հասարակութեան ճնշող մեծամասնութիւնը հիանալի գիտակցում է այս պարզ ճշմարտութիւնը: Մնում է միայն փորձել թոյլ չտալ, որ Հայաստանի ապագայի համար կարեւորագոյն իրադարձութիւնը մեր երկրի համար ոչ շահեկան ընթացք ստանայ, եւ ամէն ինչ անել՝ հակառակ արդիւնքն ունենալու ուղղութեամբ:

« ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ »

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ Արևմտեան Ամերիկայի Շրջանի ԽՄԲԱԳԻՐ՝ ՏՕԲԹ ԱՐՇԱԿ ԳԱՆՆԵԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ ԳԱԲՐԻԷԼ ՄՈՒՆՅԵԱՆ ՅԱՐԱԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ Գե. (626) 797-7680 Ֆաքս. (626) 797- 6863 E-Mail: massis2@earthlink.net http://www.massisweekly.com MASSIS Weekly Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104 Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863 (USPS 667-310) (ISSN 0744-334X) Published Weekly Except Two Weeks in August 3 ANNUAL SUBSCRIPTION RATES: USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail) Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail). All payments must be made in US funds & Drawn on US banks. Periodicals Postage Paid at Pasadena CA. Please Send Address Change To MASSIS WEEKLY 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104

Ձեր Ծանուցումները Վստահեցեք «Մասիս» Շաբաթաթերթին T: (626) 797-7680 F: (626) 797-6863 massis2@earthlink.net

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱԿ-Ը ՉԻ ՄԱՍՆԱԿՑԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ

Հայ Ազգային կոնգրեսը, ինչպես երկուշաբթի, Օգոստոս 31-ին «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց կոնգրեսի խօսնակ Արման Մուսիսեանը, չի մասնակցի Մարտի 1-2-ի դէպքերն ուսումնասիրող խորհրդարանական ժամանակաւոր յանձնաժողովի աշխատանքին:



ՀԱԿ-ի խօսնակ Արման Մուսիսեան

Յանձնաժողովը, չի շեցնենք, անցած շաբաթավերջին լուծարուած փաստահաւաք խմբի ընդդիմադիր անդամներ Անդրանիկ Քոչարեանի (ՀԱԿ) եւ Սեդա Սաֆարեանի («Ժառանգութիւն») թուով չորրորդ գեկոյցի կապակցութեամբ դիմել էր ՀԱԿ-ին՝ մարտիմէկեան իրադարձութիւններում օրէնքով չնախատեսուած գինուած միաւորումներին ներգրաւման վերաբերեալ պնդումները շուրջ պարզաբանումներ ստանալու համար:

Թեան, 5 բարձրաստիճան պաշտօնեաների եւ 4 պատգամաւորների պաշտպանութեան նախարարութեան թիկունքի ծառայութեան պահեստից 2008 թուականի Մարտի 1-ին տրամադրուել է 950 գինուորական համազօք: Տեղեկութիւնն առաջիմ հերթել է միայն Գազիկ Ծառուկեանը:

«Կոնգրեսը նամակ է ստացել Սամուէլ Նիկոնեանից, որում ինդրուում է ներկայացուցիչ նշանակել փաստահաւաք խմբի երկու անդամների կողմից կազմուած վերջին գեկոյցի քննարկմանը մասնակցելու համար», - ասաց Արման Մուսիսեանը: - «Ի պատասխան Հայ ազգային կոնգրեսի գրասենեակը յայտարարում է, որ Հայ Ազգային կոնգրեսը անհարկի է համարում որեւէ մասնակցութիւն ունենալ յանձնաժողովի աշխատանքներին»:

Արման Մուսիսեանը խորհրդարանական յանձնաժողովի հետ չաշխատելը բացատրեց նաեւ նրանով, որ ընդդիմադիր ՀԱԿ-ը «ի սկզբանէ չի ճանաչել խորհրդարանական յանձնաժողովի իրաւասութիւնն ու լեզիտիմութիւնը»:

Պօսնակը յաւելեց, որ ՀԱԿ-ը արդէն տրամադրել է իր ունեցած ամբողջ տեղեկատուութիւնը. - «Տուեալ հարցի վերաբերեալ ինչ տեղեկութիւններ որ հայթայթել է [ՀԱԿ-ը], ներկայացրել է պատկան մարմինն, տուեալ դէպքում: Փաստահաւաք խմբին՝ այդ տեղեկութիւնների ստոյգութիւնը եւ հաւաստիութիւնը ճշդելու ակնկալիքով: Այդ տեղեկութիւնների հաւաստիութիւնը ճշդելը հենց յանձնաժողովի պարտականութիւնն է, թող իրենք զբաղուեն դրանով»:

«Մենք կարծում ենք, որ Մարտի 1-ի դէպքերի անկողմնակալ եւ անաչառ ուսումնասիրութեան միակ ձեւը փաստահաւաք խմբի վերականգնումն է՝ միջազգային փորձագէտների ընդգրկմամբ», - յաւելեց նա:

Ըստ ՀԱԿ-ի՝ փաստահաւաք խմբին տրամադրած տեղեկատու-

Արձագանքելով ՀԱԿ-ի յայտարարութեանը՝ խորհրդարանական ժամանակաւոր յանձնաժողովի նախագահ Սամուէլ Նիկոնեանը ասաց, - «Շատ շնորհակալ եմ, որ Հայ ազգային կոնգրեսը փորձում է չի շեցնել մեր պարտականութիւնների մասին: Յանկալի կը լինէր հարցնել՝ բա՞նք պարտականութիւնը ո՞րն է: Որեւէ դեգինֆորմացիա տարածել եւ յետոյ ձեռնպահ մնալ հետագայ գործողութիւններից»:

ՆՈՒԷՐ ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆԸ «ՎԻՐԱԻՈՐԱՆՔ» Ե ՏԵՍՆՈՒՄ ԻՐ ԴԵՍ ՅԱՐՁԱԿՄԱՆ ԳՈՐԾՈՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱԾ ՎԱՐԿԱԾՈՒՄ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Դամենաանհետեւ մեկնաբանութիւնն է: Կարելի էր աւելի լուրջ բան գտնել», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում «Շանթ» հեռուստաընկերութեան մեկնաբան Նուէր Մնացականեանը այսպէս արձագանքեց Մայիսին իր դէմ իրականացուած յարձակման վերաբերեալ Հայաստանի ոստիկանապետ Ալիկ Սարգսեանի յայտարարութեանը, համաձայն որի յարձակողները լրագրողին չփոթել են «ինչ-որ աղջկայ հօր հետ»:



«Շանթ» հեռուստաընկերութեան մեկնաբան Նուէր Մնացականեան

«Ձեռ կարծում, թէ այդտեղ յատուկ միտում կայ ոստիկանապետի կողմից գործը շեղելու, բայց միւս կողմից էլ մի փոքր վիրաւորուած եմ, որ այդ ուղղութիւնն է ստանում գործը», - ասաց Մնացականեանը՝ յաւելելով, թէ յարձակողները «սափրազուխներ» էին, ոչ թէ «երիտասարդներ»:

հետ... մի խօսքով»: Այս գործի հետ կապուած շօշափուում է խոշոր գործարար Հրանդ Վարդանեանի եւ նրա որդու անունը: Ոստիկանապետը հաւաստել էր, որ այդ լուրերը անհիմն են: Նուէր Մնացականեանը պնդեց, թէ այդ խօսակցութիւնների շղթան բացուել է քննչական խմբի որոնողական աշխատանքների արդիւնքում:

«Մի քիչ էլ զարմանալի է, որ դիշերը 12-ին են սափրազուխները ինչ-որ աղջիկների հետ ապնդում: Յետոյ էլ ստացուեց, որ աղջիկների հորը: Իրականութեանը եւ ճշմարտութեանը ոչ մօտ է հնչում», - կարծիք յայտնեց Մնացականեանը:

Լրագրողը, մասնաւորապէս, ասաց. - «Ես այդպիսի բան չեմ ասել, կրկնում եմ: Կապը գտել է քննչական խումբը, երբ բերման ենթարկեց այն աւտոմեքենան, որը պատկանում էր «Գրանդ Քենդի» [ընկերութեանը]»:

Անցած շաբաթ լրագրողների հետ հանդիպմանը, անդրադառնալով Մայիսի 7-ին անյայտ անձանց կողմից «Շանթ» հեռուստաընկերութեան լրագրողին ծեծի ենթարկելու միջադէպին, Ալիկ Սարգսեանը ասել էր. - «Հիմքերը ընդհանրապէս այն չէ, ինչ-որ մենք մտածել ենք: Բանից պարզուեց անհետեւ մի պատմութիւն, որի հետ, ընդհանրապէս, այդ մարդը կապ չունի: Ինչ-որ աղջկայ պատմութիւն: Շփոթել են Նուէր Մնացականեանին մէկի հօր

Նուէր Մնացականեանը յայտնեց, որ իրեն առաջարկել են աւերեաման գալ մեղալականով ներկայացած երիտասարդների հետ, սակայն ինքը հրաժարուել է. - «Ինձ առաջարկել են՝ ես եմ հրաժարուել: Այդտեղ մի փոքր վիրաւորանք կայ: Կարելի էր աւելի լուրջ պատճառաբանութիւն գտնել, կամ եթէ այդ գործը չի բացայայտուում, կարելի էր ուղղակի ասել, որ այս-այս հիմնաւորումներով այդ գործը չի բացայայտուում»:

«ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ»Ը ՄԵՂԱԴՐՈՒՄ Ե ՍՈՒՏ ՄԱՏՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

«ԹԵՐԹ»: «Ժառանգութիւն» կուսակցութեան պատգամաւոր Լարիսա Ալավերդեանն այսօր հրաւիրուած մամուլի ասուլիսի ժամանակ արձագանքել է ՀՀԿ-ական պատգամաւոր Ռաֆիկ Պետրոսեանի կողմից իրենց կուսակցութեան հասցէին հնչեցուած զնահատականին:

դարը նշել է, որ Ռաֆիկ Պետրոսեանն իրաւաբանական գիտութիւնների դոկտոր է եւ նման յայտարարութիւններ անելիս ինքն էլ պէտք է ներկայացնի ապացոյցներ:

«Պահը հասել է, որ տեսնենք՝ Հայաստանում սուտ մատնութեան համար բոլորին են դատում այդպէս, ինչպէս Հացպանեանին, այդքան կոշտ», - ասել է Լարիսա Ալավերդեանը:

«Չլինի, որ Արթուր Բաղդասարեանին յայտարարեցին չպլոն է, յետոյ դարձրեցին անվտանգութեան խորհրդի նախագահ, հիմա ասում եմ կարող է մի նման ծրագիր էլ «Ժառանգութեան» հետ է կապուած: Նախապէս ասեմ, որ «Ժառանգութիւն»ը չի գնում այդպիսի գործարքների, այնպէս որ՝ որ կողմից էլ նայում ես անհետեւ, եւ ցաւօք սրտի, այդ անձի համար ոչ յարիւր յայտարարութիւն է յայտարարել է Լարիսա Ալավերդեանը:

Յիշեցնենք, որ օրերս լրագրողների հետ կայացած հանդիպման ժամանակ իշխող կուսակցութեան պատգամաւոր Ռաֆիկ Պետրոսեանն, ի պատասխան ընդդիմադիրների միաւորման մասին Tert.am-ի հարցին, «Ժառանգութեան» մասին ասել էր, որ նրանք «օտարերկրեայ պետութիւնների պատուէրներն են կատարում»:

Նա նշել է, որ կուսակցութիւնում քննարկուում է Պետրոսեանին իրաւական պատասխանատուութեան ենթարկելու հարցը, բայց առաջիմ կը սպասեն նրա ապացոյցներին՝ յատկապէս, որ դատարան դիմելիս էլ գիտեն, թէ դատաւորները ինչպէս կարող են վարուել:

Շարունակելով՝ «Ժառանգութիւն» խմբակցութեան քարտու-

ԾԱՌՈՒԿԵԱՆԸ ԿԱՊ ՉՈՒՆԻ ՍԱՐՏ 1-Ի ԴԵՊՔԵՐՈՒՄ ՅԵՏ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: ԲՀԿ նախագահի մամուլի գրասենեակը հերքում է այն տեղեկատուութիւնը, թէ Գազիկ Ծառուկեանի մերձաւոր շրջապատից որեւէ մէկը մասնակցութիւն է ունեցել Մարտի 1-ի դէպքերին:



ԲՀԿ նախագահ Գազիկ Ծառուկեան

Նախկին փաստահաւաք խմբի անդամներ Անդրանիկ Քոչարեանը ու Սեդա Սաֆարեանը յայտարարել են, որ 2008թ-ի Մարտի 1-ի իրադարձութիւնների ժամանակ մի քանի բարձրաստիճան պաշտօնեաների եւ պատգամաւորների տրամադրուել է գինուորական հանդերձանք՝ այդ օրը մայրաքաղաքում տեղ գտած հրկիգումների եւ թաւանի հրահրման նպատակով: Բարձրաստիճան պաշտօնեաների եւ պատգամաւորների թուով չի շատակուել է նաեւ Գազիկ Ծառուկեանի անունը:

Է կերպ Մարտի 1-ի դէպքերին ներգրաւուած չի եղել: Նման կեղծ եւ ստահող տեղեկութիւններ տարածողները փորձում են հասարակութեան ուշադրութիւնը շեղել Մարտի 1-ի ողբերգական դէպքերի իրական պատասխանատուներից, տարաբնոյթ յերիւրանքների միջոցով վարկաբեկել Գազիկ Ծառուկեանի բարի անունն ու պատիւը», - ասուած է ԲՀԿ նախագահի մամուլի գրասենեակը:

Գազիկ Ծառուկեանի մամուլի գրասենեակը յայտարարում է, որ հրապարակուած տեղեկութիւնները բացարձակապէս սուտ են եւ չեն համապատասխանում իրականութեանը: «Գազիկ Ծառուկեանի մերձաւոր շրջապատից որեւէ մէկը որե-

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ

ԼՈՒՐԵՐ

ԵՐՈՊԱԿԱՆ ՀԵՌԱՐԶԱԿՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՔՆՆԻ ԱԴԻԲԵԶԱՆԻ ՀԱՐՑԸ



Անուշ Եւ Ինգա Արշակեանները «Եւրատեսիլ - 2009» մրցույթի ընթացքին

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: Եւրոպական հեռարձակողների միությունը Սեպտեմբերի 11-ին կը քննարկի «Եւրատեսիլ - 2009» մրցույթի ժամանակ հայաստանցի կատարողների օգտին քուէարկած Ադրբեջանի քաղաքացիներին ազգային անվտանգութեան նախարարութիւն կանչելու հարցը: Այդ մասին տեղեկացում է միութեան պաշտօնական կայքէջը:

Հարցը քննելու է այսպէս կոչուած «արձագանքման խումբը», թէ ո՞րն էր պատճառը, որ մասնակից երկրի՝ Ադրբեջանի ազգային անվտանգութեան նախարարութիւնը հետաքրքրուել է Մալիսին կայացած մրցույթում Հայաստանը ներկայացնող Անուշ Եւ Ինգա Արշակեանների օգտին քուէարկած անձանցով: Քննարկումը անցկացուելու է Օպոլոյում:

Ինչպէս տեղեկացնում են մրցույթի կազմակերպիչները, կայ նաեւ Ադրբեջանից ստացուած պաշտօնական պատասխանը այս հարցի վերաբերեալ, որը ներկայացրել է Եւրոպական հեռարձակողների միութեան անդամ, այս կազմակերպութիւնում Ադրբեջանը ներկայացնող «Իքթիմայ» ընկերութիւնը. նրանց հաւաստիացումներով՝ ազգային անվտանգութեան նախարարութիւնը որեւէ մեկին այդ հարցով չի կանչել եւ չի հարցաքննել՝ պաշտօնապէս կամ ոչ պաշտօնապէս:

Արձագանքելով մի քանի օրից քննարկման դրուելիք այս հարցին, Եւրոպական հեռարձակողների

միութեան տնօրէն Ժան Ռեւելյոնը ասել է. - «Ինչեւէ, մենք ընդունեցինք ադրբեջանական կողմի պաշտօնական պատասխանը: Սակայն ազատ քուէարկելու իրաւունքը «Եւրատեսիլ» մրցույթի հիմնական նախապայմաններից մէկն է: Եւ ցանկացած անձ կարող է քուէարկել իւրաքանչիւր երգի օգտին, բացառութեամբ այն երկրի ներկայացուցչի երգի, որտեղ դիտում ես մրցույթը: Քուէարկութեան իրաւունքի հետ կապուած անհատի իրաւունքների խախտումը կամ միջամտութիւնը անընդունելի երեւոյթներ են»:

«Ազատութիւն» ռադիոկայանի ադրբեջանական ծառայութեանը հարցաքննութեան մասին մօտ երկու շաբաթ առաջ պատմել էր Հայաստանի ներկայացուցչիչների օգտին քուէարկողներից մէկը՝ Ռաֆշան Նասիրլին:

«Ինձ հարցաքննեցին՝ ենթարկելով հոգեբանական ճնշումներ: Ասում էին՝ «դու ինչ մարդ ես, ազգութիւն չունե՞ս, հարցնում էին, թէ ինչո՞ւ եմ քուէարկել Հայաստանի օգտին», - փոխանցել էր Նասիրլին:

Եւրոպական հեռարձակողների միութեան ղեկավարութիւնից «Ազատութիւն» ռադիոկայանին յայտնել են, որ Ադրբեջանի նկատմամբ հնարաւոր է պատժամիջոցներ կիրառուեն, դրանք կարող են ենթադրել դրամական տուգանքից մինչեւ երեք տարով մրցույթին մասնակցելու իրաւունքից զրկում:

ՄԱՐԻ ԵՌԿԱՆՈՎԻՉ. «ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ ՍԱՏԱՐՈՒՄ Է ՀԱՅ - ԹՈՒՐԲԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱԻՐՄԱՆԸ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: Միացեալ Նահանգները սատարում է հայ - թուրքական յարաբերութիւնների կարգաւորմանը եւ սահմանի բացմանը: Այդ մասին յայտարարեց Հայաստանում ԱՄՆ-ի դեսպան Մարի Եովանովիչը՝ երկուշաբթի օրը պատասխանելով լրագրողների հարցերին:

«Հայ - թուրքական յարաբերութիւնների բարելաւումը կարեւոր է թէ՛ Հայաստանի, թէ՛ թուրքիայի եւ թէ՛ տարածաշրջանի համար: Միացեալ Նահանգները սատարում է յարաբերութիւնների կարգաւորմանը եւ սահմանի բացմանը, եւ մենք շարունակում ենք յուսալ, որ շուտով շօշափելի արդիւնքներ կը լինեն», - ասաց դեսպանը:

Պատասխանելով ԱՄՆ-ում Հայոց ցեղասպանութեան ճանաչման գործընթացի վերաբերեալ հարցին՝ Մարի Եովանովիչը յիշեցրեց նախագահ Բարաք Օբամայի ապրիլ քսանչորսեան ելոյթը. - «Ես ձեր ուշադրութիւնը կ'ուզեի հրաւիրել նախագահ Օբամայի Ապրիլի 24-ին արած յայտարարութեանը այս հարցի շուրջ: Նա շատ յստակ արտայայտեց թէ՛ իր անձնական դիրքորոշումը եւ թէ՛ իր տեսակէտը գործընթացի վերաբերեալ: Եւ այժմ, երբ կարեւոր բանակցութիւններ են ընթանում հայերի եւ թուրքերի



ԱՄՆ-ի դեսպան Մարի Եովանովիչ

միջեւ, կարեւոր է, որ մենք աջակցենք այդ գործընթացին»:

Երկուշաբթի օրը Հայաստանում Միացեալ Նահանգների դեսպանատանը սզոյ մատենան է բացուել՝ ի յիշատակ Օգոստոսի 25-ին կեանքի 77-րդ տարում իր մահկանացուն կնքած սենատոր Էդուարդ Քենեդիի:

«Սենատոր Քենեդին մեծ ամերիկացի էր եւ կարծում եմ՝ աշխարհի մեծ քաղաքացի: Սենատոր Քենեդիի մահը մեծ կորուստ էր Միացեալ Նահանգների, աշխարհի, ինչպէս նաեւ Հայաստանի համար, քանի որ սենատորը Հայաստանի անկախացումից ի վեր միշտ աջակցել է նորանկախ Հայաստանին, եղել է Հայաստանի եւ ամերիկահայ համայնքի կողքին», - յայտարարեց դեսպան Եովանովիչը:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԸ ԼՐԱՑՈՒՑԻՉ 36,6 ՄԻԼԻՈՆ ԴՈՒԱՐ Է ՏՐԱՍԱԴՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: Համաշխարհային բանկի գործադիր տնօրէնների խորհուրդը անցած շաբաթավերջին հաստատել է 36,6 միլիոն դոլարին համարժէք գումարով լրացուցիչ ֆինանսաւորում Հայաստանի կենսական ճանապարհների բարելաւման ծրագրի համար:

Համաշխարհային բանկի երեւանեան գրասենեակի հաղորդագրութեան համաձայն, նշուած ծրագիրը (ՀՃԲԾ-ԼՅ) «կ'աջակցի Հայաստանի կառավարութեան» գիւղական բնակչութեան համար երկրի հիմնական ճանապարհային ցանցի հասանելիութեան արմատական բարելաւմանն ու միջնաժամկէտ հատուածում աշխատատեղերի ստեղծմանն ուղղուած ընթացիկ ջանքերին, այն Հայաստանին կ'օգնի նաեւ երկրի տնտեսութեան եւ իր բնակչութեան բարօրութեան վրայ համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցութիւնը մեղմելու հարցում»:

«Լրացուցիչ ֆինանսաւորման միջոցով է՛լ աւելի կ'ընդլայնուեն

իրականացման ընթացքում գտնուող սկզբնական ծրագրի աշխատանքները: Տարիների ընթացքում կենսական նշանակութեան ճանապարհների վերականգնմանն ու պահպանմանն ուղղուած ոչ բաւարար ներդրումները յանգեցրել են ընդհանուր վատ վիճակի եւ դժուար անցանելիութեան, իսկ որոշ դէպքերում՝ այդ ճանապարհների բացարձակ անանցանելիութեան: Գիւղական համայնքները հիմնական մայրուղիներին կապող կենսական նշանակութեան ճանապարհների վատ եւ անբաւարար վիճակը շարունակում է խոչընդոտել գիւղական բնակչութեան տնտեսական եւ սոցիալական զարգացումը եւ հանգեցնում տնտեսական զգալի օգուտների չիրացման եւ հնարաւորութիւնների կորստի: Ընդ որում, բերքը ժամանակին շուկայ չհասցնելու հետեւանքով առաջացած վնասը հասել է 40 կամ աւելի տոկոսի, իսկ որոշ համայնքներում՝ ընդհուպ մինչեւ 80 տոկոսի», - ասուած է հաղորդագրութիւնում:

ԻԼՅԱՍ ԱԼԻԵՒ. «ԱԴԻԲԵԶԱՆԻ ԲՈԼՈՐ ԳՐԱԲԵԱԼ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՑՈՒԵԼՈՒ ԵՆ»

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը կարծիք է յայտնել, որ դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման բանակցային գործընթացում ադրբեջանական կողմի ներդրած ջանքերը արդէն արդիւնք են տալիս:

APA գործակալութեան փոխանցմամբ, Ատրպէյճանի նախագահը, մասնակցելով մոսկուլմանական Ռամադան ամսուայ մեկնարկի կապակցութեամբ Օգոստոսի 28-ին կազմակերպուած Իֆթար տօնակատարութեանը, ասել է. - «Բանակցային բոլոր փուլերում մեր սկզբունքը եղել է այն, որ ինդիւրը կարող է լուծուել միայն Ադրբեջանի տարածքային ամբողջականութեան շրջանակներում: Լեռնային

Ղարաբաղում մարդիկ կարող են ունենալ ինքնավարութեան բարձր աստիճան, սակայն ամբողջական ադրբեջանական պետութեան սահմաններում: Այսօր որպէս հիմք ընդունուած են հենց այդ սկզբունքները»:

Իլհամ Ալիեւը ընդգծել է, որ ներկայ բանակցային գործընթացի շրջանակներում «գրաւեալ բոլոր տարածքները յաջորդաբար կ'ազատագրուեն, ադրբեջանցի փախստականները կը վերադառնան իրենց բնակավայրերը, կը վերականգնուեն ենթակառուցուածքները, ապա կ'որոշուի Ղարաբաղի իրաւաբանական կարգավիճակը:

«Մենք մշտապէս ասել ենք, որ Ղարաբաղը պէտք է ունենայ կար-

գավիճակ, սակայն մենք այդ կարգավիճակը չենք տեսնում Ադրբեջանի տարածքային ամբողջականութիւնից դուրս: Դրա հետ Ադր-

բեջանի Հանրապետութիւնը երբեք չի համակերպուի, - յայտարարել է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ
Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ:
G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104
Norserount@sbcglobal.net

ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

ՀԱՅ-ԹՈՒՐԲԱԿԱՆ ԵՐԿԿՈՂՄ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՒ ԵՐԿՈՒ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՋԵՒ ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ստորեւ՝ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ երկկողմ յարաբերութիւններու զարգացման եւ երկու երկիրներու միջեւ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու մասին արձանագրութիւնները եւ ժամանակացոյցը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԹՈՒՐԿԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ ԵՐԿԿՈՂՄ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Հայաստանի Հանրապետութիւնը եւ Թուրքիայի Հանրապետութիւնը. Ղեկավարուելով նոյն օրը ստորագրուած Հայաստանի Հանրապետութեան եւ Թուրքիայի Հանրապետութեան միջեւ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու մասին Արձանագրութեամբ,

Նկատի ունենալով վստահութեան եւ երկկողմ շահերի յարգման վրայ հիմնուած երկկողմ յարաբերութիւնների զարգացման հեռանկարները,

Որոշելով զարգացնել եւ խորացնել իրենց երկկողմ յարաբերութիւնները քաղաքական, տնտեսական, էներգետիկ, տրանսպորտի, մշակույթի, գիտական, տեխնիկական եւ այլ ոլորտներում՝ հիմնուելով երկու երկիրների ընդհանուր շահերի վրայ,

Աջակցելով երկու երկիրների միջեւ համագործակցութեան զարգացմանը միջազգային եւ տարածաշրջանային կազմակերպութիւններում, մասնաւորապէս ՄԱԿ-ում, ԵԱՀԿ-ում, Եւրոպայի Խորհրդում, Եւրատլանտեան գործընկերութեան խորհրդում եւ ՄՕՏՀ-ում,

Հաշուի առնելով երկու պետութիւնների ընդհանուր նպատակը՝ համագործակցելու տարածաշրջանային կայունութեան եւ անվտանգութեան ամրապնդման ուղղութեամբ՝ յանուն տարածաշրջանի ժողովրդավարական եւ տեւական զարգացման ապահովման,

Վերահաստատելով իրենց յանձնառութիւնը տարածաշրջանային եւ միջազգային վէճերի եւ հակամարտութիւնների խաղաղ կարգաւորմանը՝ միջազգային իրաւունքի նորմերի եւ սկզբունքների հիման վրայ,

Վերահաստատելով իրենց պատրաստակամութիւնը ակտիւօրէն աստարելու միջազգային հանրութեան գործողութիւններին՝ ընդդէմ տարածաշրջանում եւ աշխարհում անվտանգութեան եւ կայունութեան դէմ առկայ սպառնալիքների, ինչպիսիք են ահաբեկչութիւնը, անդրազգային կազմակերպուած յանցագործութիւնը, թմրանիւթերի եւ զէնքի ապօրինի առք ու վաճառքը,

1. Համաձայնեցին բացել ընդհանուր սահմանը սոյն Արձանագրութեան ուժի մէջ մտնելուց յետոյ երկու ամսուայ ընթացքում,

2. Համաձայնեցին նաեւ երկու երկիրների արտաքին գործերի նախարարութիւնների միջեւ պարբերաբար անցկացնել քաղաքական խորհրդատուութիւններ, իրականացնել երկու ժողովուրդների միջեւ փոխվստահութեան վերականգնմանն ուղղուած պատմական հարթութեան երկխօսութիւն, այդ թւում՝ պատմական փաստաթղթերի եւ արխիւների գիտական, անկողմնակալ ուսումնասիրութեան միջոցով գոյութիւն ունեցող ինդիւիդուալ յստակեցման ու առաջարկների ձեւակերպման համար, առաւելագոյնս օգտագործել երկու երկիրների միջեւ գոյութիւն ունեցող ճանապարհային, հաղորդակցութեան, էներգետիկ ենթակառուցուածքներն ու ցանցերը եւ միջոցներ ձեռնարկել այդ ուղղութեամբ, զարգացնել երկկողմ իրաւապայմանագրային դաշտը՝ երկու երկիրների միջեւ համագործակցութիւնը խթանելու նպատակով, համագործակցել գիտութեան եւ կրթութեան ոլորտներում՝ համապատասխան հաստատութիւնների միջեւ յարաբերութիւնների խրախուսման եւ մասնագէտների ու ուսանողների փոխանակումը խթանելու միջոցով, եւ աշխատանք տանել երկու կողմերի մշակութային ժառանգութեան պահպանման եւ համատեղ մշակութային ծրագրեր իրագործելու նպատակով, համագործակցութիւն հաստատել հիւպատոսական բնագաւառում՝ Հիւպատոսական յարաբերութիւնների մասին Վիեննայի 1963 թուականի կոնվենցիայի համաձայն՝ երկու երկիրների քաղաքացիներին անհրաժեշտ աջակցութիւն ապահովելու նպատակով, ձեռնարկել կոնկրետ միջոցներ երկու երկիրների միջեւ առեւտուրը, զբօսաշրջութիւնը եւ տնտեսական համագործակցութիւնը զարգացնելու նպատակով, երկխօսութիւն ծաւալել եւ ամրապնդել համագործակցութիւնը բնապահպանական հարցերում,

3. Համաձայնեցին ստեղծել միջկառավարական երկկողմ յանձնաժողով, որը կ'ունենայ առանձին ենթալստիտուտներ՝ սոյն Արձանագրութեան վերը նշուած երկրորդ գործառութեան յարաբերութեան յանձնառութիւնների անմիջական իրագործման նպատակով: Միջկառավարական յանձնաժողովի եւ նրա ենթալստիտուտների աշխատաձեւերի մշակման նպատակով, սոյն Արձանագրութեան ուժի մէջ մտնելուն յաջորդող օրուանից 2 ամիս անց, կը ստեղծուի աշխատանքային խումբ՝ երկու արտգործնախարարների ղեկավարութեամբ: Սոյն Արձանագրութեան ուժի մէջ մտնելուց յետոյ 3 ամսուայ ընթացքում այդ աշխատաձեւերը կը հաստատուեն նախարարական մակարդակով: Միջկառավարական յանձնաժողովի առաջին նիստը կը կայանայ նշուած աշխատաձեւերի ընդունումից անմիջապէս յետոյ:

Ենթալստիտուտները կը սկսեն իրենց աշխատանքը դրանից ոչ ուշ քան մէկ ամիս անց եւ կը գործեն շարունակաբար մինչեւ իրենց մանդատի աւարտը:

Ըստ անհրաժեշտութեան, միջազգային փորձագէտները կը մասնակցեն ենթալստիտուտների աշխատանքներին:

Սոյն Արձանագրութեան իրագործման համար երկուստեք համաձայնեցուած ժամանակացոյցը եւ տարրերը ներկայացուած են յաւելուածում, որը հանդիսանում է սոյն Արձանագրութեան անբաժան մաս:

Սոյն Արձանագրութիւնը եւ Հայաստանի Հանրապետութեան եւ Թուրքիայի Հանրապետութեան միջեւ Դիւանագիտական Յարաբերութիւններ հաստատելու մասին Արձանագրութիւնը ուժի մէջ են մտնում միեւնոյն օրը՝ վաւերացման գործիքների փոխանակմանը

յաջորդող ամսուայ առաջին օրը:

Ստորագրուած է , հայերէն, թուրքերէն եւ անգլերէն հաւասարազօր կրկնօրինակներով: Մեկնաբանութեան տարածաչափութեան դէպքում գերակայութիւնը տրուած է անգլերէն տեքստին:

Յաւելուած: Հայաստանի Հանրապետութեան եւ Թուրքիայի Հանրապետութեան միջեւ յարաբերութիւնների զարգացման Արձանագրութեան իրագործման ժամանակացոյցը եւ տարրերը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԹՈՒՐԿԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Հայաստանի Հանրապետութիւնը եւ Թուրքիայի Հանրապետութիւնը. Ձգտելով հաստատել բարիդրացիական յարաբերութիւններ եւ զարգացնել երկկողմ համագործակցութիւնը քաղաքական, տնտեսական, մշակութային եւ այլ ոլորտներում՝ ի շահ իրենց ժողովուրդների՝ համաձայն յարաբերութիւնների զարգացման մասին նոյն օրը ստորագրուած Արձանագրութեան,

Վկայակոչելով ՄԱԿ-ի Կանոնադրութեամբ, Հելսինքեան Եզրափակիչ ակտով, Նոր Եւրոպայի համար Փարիզեան խարտիայով իրենց ստանձնած պարտաւորութիւնները,

Վերահաստատելով հաւասարութեան, ինքնիշխանութեան, այլ պետութիւնների ներքին գործերին չմիջամտելու, տարածքային ամբողջականութեան եւ սահմանների անխախտելիութեան սկզբունքները յարգելու իրենց երկկողմ եւ բազմակողմ պարտաւորութիւնները,

Հաշուի առնելով երկու երկիրների միջեւ՝ ամբողջ տարածաշրջանում խաղաղութեան, անվտանգութեան եւ կայունութեան ամրապնդմանը նպաստող, հաւատի եւ վստահութեան միջավայր ստեղծելու, ուժի կիրառումից կամ դրա սպառնալիքից զերծ մնալու, վէճերի խաղաղ կարգաւորման, մարդու իրաւունքների եւ հիմնարար ազատութիւնների յարգման միջոցառում ստեղծելու կարեւորութիւնը,

Վերահաստատելով երկու երկիրների միջեւ գոյութիւն ունեցող ընդհանուր սահմանի փոխադարձ ճանաչումը՝ սահմանուած միջազգային իրաւունքի համապատասխան պայմանագրերով,

Կարեւորելով իրենց որոշումը՝ բացելու ընդհանուր սահմանը, Հաստատելով իրենց յանձնառութիւնը՝ ձեռնարկել մնալ բարիդրացիական յարաբերութիւնների ոգուն չհամապատասխանող քաղաքականութիւն վարելուց,

Դատապարտելով ահաբեկչութեան, բռնութեան եւ ծայրայեղականութեան բոլոր ձեւերը՝ անկախ դրանց պատճառներից եւ խոստանալով ձեռնարկել մնալ նման գործողութիւնները խրախուսելուց ու հանդուրժելուց եւ համագործակցել դրանց դէմ պայքարում,

Հաստատելով ընդհանուր շահերի, բարի կամքի, փոխըմբռնման, խաղաղութեան եւ ներդաշնակութեան խթանման վրայ հիմնուած յարաբերութիւնների նոր ձեւեր եւ ուղիներ մշակելու իրենց պատրաստակամութիւնը,

Համաձայնեցին հիմնել դիւանագիտական յարաբերութիւններ սոյն Արձանագրութեան ստորագրման օրուանից՝ Դիւանագիտական յարաբերութիւնների մասին Վիեննայի 1961թ. կոնվենցիայի համապատասխան, եւ փոխանակել դիւանագիտական ներկայացուցչութիւններ:

Սոյն արձանագրութիւնը եւ Հայաստանի Հանրապետութեան եւ Թուրքիայի Հանրապետութեան միջեւ երկկողմ յարաբերութիւնների զարգացման մասին Արձանագրութիւնը ուժի մէջ են մտնում միեւնոյն օրը՝ վաւերացման գործիքների փոխանակմանը յաջորդող ամսուայ առաջին օրը:

Կատարուած է □... .. , հայերէն, թուրքերէն եւ անգլերէն հաւասարազօր կրկնօրինակներով: Մեկնաբանութեան տարածաչափութեան դէպքում գերակայութիւնը կը տրուի անգլերէն տեքստին:

Հայաստանի Հանրապետութեան եւ Թուրքիայի Հանրապետութեան միջեւ երկկողմ յարաբերութիւնների զարգացման մասին Արձանագրութեան իրագործման ժամանակացոյցը եւ տարրերը

Ձեռնարկուող բայերը եւ ժամկէտ

1. ընդհանուր սահմանի բացում
Հայաստանի Հանրապետութեան եւ Թուրքիայի Հանրապետութեան միջեւ յարաբերութիւնների զարգացման Արձանագրութեան ուժի մէջ մտնելուց յետոյ երկու ամսուայ ընթացքում

2. երկու արտգործնախարարների ղեկավարութեամբ աշխատանքային խմբի ստեղծում՝ միջկառավարական յանձնաժողովի եւ նրա ենթալստիտուտների աշխատաձեւերի մշակման նպատակով Հայաստանի Հանրապետութեան եւ Թուրքիայի Հանրապետութեան միջեւ յարաբերութիւնների զարգացման Արձանագրութեան ուժի մէջ մտնելուն յաջորդող օրուանից երկու ամիս անց

3. միջկառավարական յանձնաժողովի եւ իր ենթալստիտուտների աշխատաձեւերի հաստատում նախարարների մակարդակով Հայաստանի Հանրապետութեան եւ Թուրքիայի Հանրապետութեան միջեւ յարաբերութիւնների զարգացման Արձանագրութեան ուժի մէջ մտնելուն յաջորդող օրուանից երեք ամսուայ ընթացքում

4. միջկառավարական յանձնաժողովի առաջին նիստի գումարում՝ միջկառավարական յանձնաժողովի եւ նրա ենթալստիտուտների աշխատաձեւերի ընդունումից անմիջապէս յետոյ՝ նախարարական մակարդակով

5. ստորեւ նշուած ենթալստիտուտների աշխատանքների մեկնարկում.

- քաղաքական հարցերով ենթալստիտուտով,

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ՆՇՈՒԵՑԱԲ «ՄԱՍԻՍ»Ի 29-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Գ.Մ.

Անցեալ Կիրակի, Օգոստոսի 29ին, 2009, ընկերա-համակրական ջերմ մթնոլորտի մէջ եւ համագործակցին մակարդակով նշուեցաւ «Մասիս»ի հիմնադրութեան 29-րդ տարեդարձը:

Արդարեւ, ընտրանի հասարակութիւն մը փութացած էր Տաղլեան մշակութային համալիրի շքեղ հանդիսասրահը, ուր տեղի ունեցաւ տարեկան աւանդական հանգանականային ճաշկերոյթը:

Հրաւիրեալ անձնաւորութեանց մէջ կը նշմարուէին Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի առաջնորդ, Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան, Հայաստանի հանրապետութեան հիւպատոս՝ Մեսրոպ

եան յոտընկայս լուծեամբ յարգեցին յիշատակը մեծ կորուստեալին: Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեանի կողմէ սեղանի» օրհնութեան արօթքէն ետք խօսք առաւ «Մասիս»ի գլխաւոր խմբագիր Տօքթ. Արշակ Գազանճեան: Ան ըսաւ. «Այսօր կը տօնախմբենք «Մասիս» շաբաթաթերթի հիմնադրութեան տարեդարձը: Այս մէկը իրապէս որ հպարտութիւն առթող պարագայ մըն է, որովհետեւ որպէս մամուլը մեծ դեր վերապահուած է իրեն, հայ հասարակութեան առաջնորդութեան մէջ: Այնուհետեւ, նշեց ան, որ թերթը դժուարին շրջաններ բոլորած էր, բայց դիմագրաւած էր իր տնտեսական եւ մարդկային պակասի դժուարութիւններ: Յաղթահարած էր բոլորը, անհրաժեշտը տնօրինելով: «Մասիս» եթէ



Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան

րեդարձը եւ մաղթեց յարատեւութիւն ու նորանոր յաջողութիւններ: Ողջունելով ջերմ խօսքերով եւ «Մասիս»ին ուղղուած գնահատանքի ելույթներով հանդէս եկան Ամերիկայի Հայ Գրողներու Միութեան նախագահ Թորգոմ Փօստաճեան, որ «Մասիս» շաբաթաթերթի առաջին բաժանորդը եղած է: Կլենտէյլի քաղաքապետ Ֆրէնք Գինթերօ շնորհակարտեց «Մասիս»ի տարեդարձը եւ մաղթեց անոր յարաւետութիւն ու նորանոր յաջողութիւններ: «Նոր Օր» շաբաթաթերթի խմբագիր Դոկտ. Մինաս Գոճայեան շնորհակարտեց «Մասիս»ը եւ զայն նկատեց «Նոր Օր»ի մետային միւս երեսը, մաղթելով երկու թերթերուն յարատեւ գործակցութիւն: Ելույթ ունեցաւ նաեւ «Մասիս»ի խմբագրական կազմէն՝ Սահակ Թութճեան, որ բարձր գնահատելով «Մասիս»ի սկզբունքային ուղեգիծը, բերած է եւ կը շարունակէ բերել իր անվերապահ գործակ-

ցութիւնը «Մասիս»ի խմբագրական կազմէն ներս:

Օրուան գեղարուեստական յայտագրին իրենց մասնակցութիւնը բերին երգիչ Հրաչ Պողարեան եւ «Մելոտի Միջազգային Դպրոցի երաժիշտներէն» ջութակահարուհի Լուսինէ Պետրոսեան, ընկերակցութեամբ Սագո Ղարիպեանի (էլեկտրոնային դաշնամուր):

Տեղի ունեցան սրտաբուխ նուիրատուութիւններ: Արդարեւ «Մասիս»ի տարեկան դրամահա-



Կլենտէյլ քաղաքապետ Ֆրէնք Գինթերօ

ւաքի արշաւին իրենց մասնակցութիւնը բերած էին նաեւ մեծ թիւով հեռաւոր վայրերու մէջ բնակող համակիրներ եւ ընթերցողներ:

Ներկաները ուշ երեկոյեան հեռացան գեղակերտ սրահէն, իրենց հետ տանելով յիշատակելի միջոցառումին լաւագոյն տպաւորութիւններն ու հայ մամուլը քաջալերած ըլլալու հոգեկան գոհունակութիւնը:



Տօքթ. Արշակ Գազանճեան, Պետրոս Տաղլեան եւ Յարութ Տէր Դաւիթեան

Շապոյեան, Ս. Դ. Հ. Կեդրոնական վարչութեան ատենապետ Տէր եւ Տիկ. Սեդրակ Աճէմեան, Կլէնտէյլ քաղաքի քաղաքապետ Ֆրէնք Գինթերօ, ՌԱԿ-ի Շրջանային վարչութեան ատենապետ՝ Յարութիւն Նազարեան, Ս.Դ.Հ.Կ. վարիչ մարմնի ատենապետ Տէր եւ Տիկ. Տօքթ. Համբրիկ Սարաֆեան, Մայր Տաճարի Շինութեան Յանձնախումբի ատենապետ Հոգշ. Տ. Պարետ Ծ. Վրդ. Երէցեան, Արժ. Դոկտ. Զաւէն Աւ. Քհնյ. Արզումանեան, Արժ. Տ. Նարեկ Աւ. Քհնյ. Մատարեան, ինչպէս նաեւ ծանօթ մաւորականներ եւ տարբեր կազմակերպութեանց ներկայացուցիչներ:

Երեկոյի հանդիսավարը՝ Յարութ Տէր Դաւիթեան, ողջունելէ ետք ներկայ հասարակութիւնը՝ անդրադարձաւ «Մասիս»ի հիմնադիրներէն եւ առաջին խմբագիր Տօքթ. Յարութիւն Սաղրեանի վաստակին ու ներդրումին մասին եւ յայտնեց թէ իր անդարձ մեկնումը մեծ բաց մը կը ձգէ մեր շրջանակէն ներս: Ապա ներկաներ մէկ վայրկ-

կրցաւ այս վիճակին հասնիլ՝ զանկա կը պարտի իր անշեղ գաղափարական ուղղութեան ու անսպաթաք սկզբունքային վարքագծին: «Հայրենիքի կողքին» հայրենիքի համար» այս եղաւ իր հաւատոյ հանգանակը յարեց Տօքթ. Ա. Գազանճեան: Ան գնահատեց իր բոլոր աշխատակիցները, որոնք տարիներէ ի վեր կը շրջապատեն «Մասիս»ը, զայն դարձնելով փնտուած շաբաթաթերթ: Ներկայիս համացանցի միջոցաւ ան լայն տարածում գտած է բովանդակ աշխարհի մէջ:

«Մասիս» շաբաթաթերթի կողմէ Տօքթ. Արշակ Գազանճեան յիշատակի պատուոյ գիր մը յանձնեց ազգային բարերար Տիար Պետրոս Տաղլեանին, «Մասիս»ին ցոյց տուած իր նիւթա-բարոյական աջակցութեան համար:

Իր ողջունի խօսքին մէջ առաջնորդ Յովնան Սրբազան գնահատեց հայ մամուլին վիճակուած առանձնայատուկ դերը մեր իրականութենէն ներս: Ան շնորհակարտեց «Մասիս» շաբաթաթերթի 29-րդ տա-

Advertisement for MASSIS Weekly subscription. Includes the title 'ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ', a list of subscription rates for USA, Canada, and Overseas, and a form to provide name, address, city, state, zip code, and country.

Advertisement for bankruptcy services in Armenian: 'ՏԵՄԷՔ՝ ԵԹԵ BANKRUPTCY-Ի ՕՐԵՆՔՆԵՐԸ ԿՕԳՆԵՆ ՁԵՁԻ, ԶԱՆԳԱՅԱՐԷՔ'.

Advertisement for JANSEZIAN LAW FIRM, PC. Text: 'If you're facing overwhelming debts, bankruptcy laws may eliminate all your debts permanently! 225 South Lake Avenue, Third Floor, Pasadena, California 91101 Call Now for a FREE Consultation: 626-432-7209'.

Portrait of Nazareth V. Jansezian, Esq. with name and title below.

ՏԱՐԵՂԱՐՁ

«ԻՆՏԻ ՄԱՍԻՍ ՉՅԱՍԱԻ»

ՊՕՂՈՍԱԳԻՍԵԱՆ

Քսան ինն տարիներ առաջ, Լիբանանից աշխարհի այս կողմը ժամանած մի խումբ հայ մտաւորականներ, փաստինա քաղաքում խորհրդի էին նստել, իրենց դաւանած Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան պաշտօնաթերթ հրատարակելու: «Մասիս» էին անուանել այն, որ իւրաքանչիւր ընթերցող սրտում հոսէր հայոց «Ազատն Մասիս»ի ոգեղէն հուրը:

Մեծն Սարգսեան ավանդել էր՝ «Ուր գնաս հայաստան գոռայ»: Աշխարհի այս կողմն եկած փայլուն մտաւորականներ՝ Սաղրեան, Գազանճեան, Մոլոյեան, Տէր Դաւիթեան, Խոտանեան, Թուֆճեան «Մասիս»ը գլխաւորած, նրա էջերից իրենց տոհմապետ, նահապետի ոգուկրակը իրենց հոգիներում «Հայաստան» գոռացին, «Մասիս» դարձրին տրիբունը Հայաստան աշխարհի: Հայաստան, Հայաստանի Հանրապետութիւն, դաշնակցած էր եղել այլ տասնընչորս ազգերի հետ: «Մասիս»ը իր կուսակցութեան ընկերվար, ժողովրդավար հաւատամքով կանգնել էր խորհրդային կարգերով հանրապետութեան պետականութեան կողքին:

«Մասիս իր էջերը լայն բացած, աշխարհասփիւռ հայերին հասցնում էր ուրախ լուրեր հայոց աշխարհից: Իր էջերում հրատարակել նրա բանաստեղծների երկունքից յառնած բանաստեղծութիւն, աշխարհներ գնացող գիտնականների մտքերի փայլատակումները, Համբարձումեանի ու գուրգաստեանի տիեզերական սիրանքների ճախրանքը, հայ քաղաքի ու գիւղի աշխատաւորների նուաճումները: Հայոց հողի մշակների առատ բերքի լուրերի հրճուանքը, Մասիսի ստորոտի դաշտում խաղողի բերքի հաւաքի երգերը, խաղողից քամուած գինու, քոնեակի հուշակի փառաբանումը: Եւ երբեք քաղաքականապէս չհասկաղորուեց նրան:

Նորէն ասող եկաւ հայոց երկնակամար, գնում դէպի արեւելեան կողմն հայոց աշխարհի: Նրա քաջութեան ոգու լոյսը որպէս դրօշ պարզած, գէնքի ելաւ Հայաստանը: Գնացին տուն բերելու գաւթուած հողն հայոց: Հայոց քաջեր գնում էին գետի ջրերի ափեր, որտեղ իրենց արքան Արտաշէս արծուաչին թռիչով անցել միւս ափ, տուն բերել ալանաց հէքիաթային օրիորդին, որ թագուհի լինէր հայոց աշխարհի: Չթողեցին...: Բացէք էջերը «Մասիս»ի, հայոց ազատու-

Ժիրայր Նայիրի հաւասարապէս կը ծառայէ արժէքներու՝ Հայաստանին ու հայ ժողովուրդին, ապա նաեւ իր կուսակցութեան ու համայն մարդկութեան: Ան ամուր կառչած կը մնայ մեր մշակութային արժէքներուն, ու գանտնք աւելիով կը ծաղկեցնէ եւ կը տարածէ մեր շրջապատին մէջ: Ան կառչած կը մնայ յոյսին ու լաւատեսութեան եւ շրջապատը կը վարակէ այդ յոյսով ու լաւատեսութեամբ: Իրեն համար հայութիւնը յոյսի ժողովուրդ է, Հայաստանը յոյսի հայրենիք: Հայութեան յաջողութեան օրերը տակաւին կը կազմաւորուին, քանի մենք կամքի ժողովուրդ ենք: Հայաստանի բարգաւաճման, հզօրացման եւ ամբողջացման օրերը տակաւին կը կերտուին, քանի մենք պայքարի ժողովուրդի ենք:

Ազգային, քաղաքական, գաղափարական տեղեկութեանց, լուրերու, մանրամասնութեանց ծով աղբիւր, իմացական բարձր կարողութեան տէր հեղինակութիւն մըն է ան:



Դասախօսութեան ընթացքին հարցերը կը վերլուծէ իր եղանակով: Մօտեցումը գիտական է, հանգրուանային հարցը կը բաժնէ մասերու, ապա ենթաբաժանումներու եւ իւրաքանչիւր բաժին սպառիչ կերպով կը վերլուծէ, առանց ճապարհելու, իրար խառնելու: Կը մնայ միշտ կիզակէտին վրայ: Ժամեր շարունակ, ոտքի վրայ, կը խօսի, կը լուսաբանէ ու կը պատասխանէ: Կը մագնիսացնէ քեզ: Ոչ մէկ տատամսում:

Կարելի է արդեօք 60 տարիներու բազմահանգրուան ծառայութեան մասին արտայայտուիլ հակիրճ կերպով, հազիւ թէ...

Թող բարձրեան Աստուած օրհնէ նահապետ՝ ժիրայր Նայիրիին վաստակն ու հայութեան ձեռքերը միացնէ ի խնդիր մեր ազգային անսակարկելի իրաւութեան իրականացման:

Ժողովուրդի գերագոյն շահերը, ազգային ու պատմական իրաւունքները եղած են ու կը մնան մասնակի ամէն հաշիւէ վեր, արժանի՝ անսակարգ նուիրումի:

Չարենցի փրկութեան ուժ հանդիսացող հաւաքական ուժին Չատագովն է ան, որուն ի խնդիր կը մղէ իր պահանջատիրական, հայրենական գրաւեալ հողերու ազատագրման պայքարը, Հայաստանի անկախութեան պահպանման, հայ պետութեան ամրապնդման, հայ կեանքի բարգաւաճման, ժողովրդավար ու արդար կարգերու հաստատման:

Սիրելի քեռայր, Այս բարեբաստիկ, յիշատակելի եւ եզակի առիթով, մասնաւորաբար կը շնորհաւորենք ու կը գնահատենք շարունակականօրէն ծառայելու քու ազնիւ ոգին: Կը շնորհաւորենք քու կողակիցը՝ սիրելի քրոջ Մարիին ու ընտանիքի անդամներուն, «Նայիրի» թերթի տնօրնէութիւնը, խմբագրութիւնը եւ աշխատակիցները:

Սիրելի քեռայր, թող այս յօդուածը դառնայ որպէս փոքրիկ ծաղկեփունջ, փոխան 60 տարիներու պատուով իրականացուցած հաստատական քու անխոնջ ծառայութեան:

Այսպէս, շարունակէ մեր ճամբան, հայապահպանման ու հայակերտման դժուարին ճամբան, երաշխաւորելով «Նայիրի»ի շարունակականութիւնը ժողովուրդի կեանքէն ներս:

Սիրով ջերմ ողջոյնով աներձագդ՝

ՆՈՐ ԶՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԶԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՈՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ներկայ հրատարակութիւնը ներածական մըն է Հայաստանեայց Եկեղեցւոյ աստուածաբանութեան, գրուած պարզ եւ ժողովրդական մակարդակի վրայ: Կը բովանդակէ հիմնական վարդապետութիւնները որոնք Հայ Եկեղեցին ինքնանկախ ու կանգուն պահած են դարերու ընթացքին, սկսեալ Քրիստոսի Եկեղեցւոյ Տիեզերական Առաջին երեք ժողովներու առած որոշումներէն՝ Դ եւ Ե դարերուն:

Կեսական աստուածաբանութիւնը կը զբաղի Աստուծոյ գոյութեամբ, Որդու յայտնութեամբ եւ Ս. Հոգիի միջնորդութեամբ: Ս. Երրորդութեան վարդապետութիւնը յանգեցաւ Ս. Եկեղեցւոյ հաստատման Պէնտէկոստէի օրը, երբ Ս. Հոգին ամենագոր ազդուծով իջաւ Առաքեալներուն վրայ:

Գիրքը կ'ընդգրկէ նաեւ Եկեղեցւոյ եօթը խորհուրդները որպէս տեսանելի ծէսը Ս. Հոգիի ներգործութեան: Ամէն խորհուրդ իր կարգին բացատրուած է ժողովուրդին հասկնալի լեզուով: Տրուած է նաեւ Փրկչին յատուկ անուններն ու անոնց աստուածաբանական տարրողութիւնը հիմնուած Սուրբ Գիրքի Հին եւ Նոր Կտակարաններու տուեալներուն վրայ:

Յատուկ տեղ յատկացուցած ենք Պօղոս Առաքեալի ներթափանցող աստուածաբանութեան, ուր կը յայտնուին Քրիստոսի իսկական Անձն ու Անոր առաքելութիւնը՝ այս անգամ նորահաստատ Եկեղեցիներու միջոցաւ որոնք գոյացան Առաքեալին աննահանջ եւ անվարան ճամբորդութիւններով: Պօղոս Առաքեալի թուղթերը անփոխարինելի աղբիւր կը հանդիսանան Քրիստոսի Անձին ու վարդապետութեան մասին:

Ընդգծած ենք նաեւ Հայ Եկեղեցւոյ Շարականներու աստուածաբանութիւնը որ այնքան շքեղօրէն կը հանդիսադրեն Քրիստոսի կեանքը, սկսելով Աստուածամօր Աւետումէն մինչեւ Մկրտութիւն, անկէ մինչեւ Պայծառակերպութիւն եւ Յարութիւն, Ս. Հոգւոյ գալուստն մինչեւ Առաքեալներու քարոզութիւնը: Այդ ամբողջը անշուշտ գրուած են եւ երգուած Հայ Եկեղեցւոյ սուրբ հայրերու կողմէ, որոնք տուած են անոր հարազատ դիմագիծ եւ ուղղափառ դաւանանք:

Մեր փափաքն է որ մեր ընթերցողները աւելի մօտեն կարենան ծանօթանալ Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ՝ այս անգամ դաւանանքի եւ վարդապետութեան ճամբով:

«ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԶԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՈՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՈՅ»

ԱՐԺՆ. ԴԿ. Տ. ԶԱԿԵՆ ԱԲԱԳ ՔՅՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Երեքշաբթի, Սեպտեմբեր 15, 2009ի երեկոյեան ժամը 7.30ին, Արեւմտեան Թեմի Առաջնորդարանէն ներս տեղի պիտի ունենայ յատուկ երեկոյ մը, ուր պիտի ներկայացուի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մտաւորական ու վաստակաշատ Եկեղեցական՝ Արժն. ԴԿ. Տ. Զաւէն Աւագ Քհնյ. Արզումանեանի գրաւոր նոր աշխատանքներէն մէկը, որ կը կրէ հետեւեալ խորագիրը. «Աստուածաբանութիւն Հայց. Առաքելական Ողղափառ Եկեղեցւոյ» (հրատարակուած հայերէն եւ անգլերէն առանձին հատորներով):

Չոյզ հատորները հրատարակուած են այս տարի՝ 2009ին՝ Արեւմտեան Թեմի Առաջնորդութեան կողմէ, հովանաւորութեամբ Թեմիս Առաջնորդ՝ Յովնան Արք. Տէրտէրեանին:

Երեկոյթին, գիրքը պիտի ներկայացուի չարգելի հեղինակին իսկ կողմէ:

Ձեռնարկը բաց պիտի ըլլայ հասարակութեան համար:

ՕԳՏԱԿԱՐ ՏԵՍԱԺԱՊԱԿԵՆ ՍԸ (DVD) ԶԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Սան Ֆրանսիսքոյի Սբ. Յովհաննէս Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժն. Տ. Սարգիս Աւագ Քհնյ. Փետրոյեան, տարիներէ ի վեր ուխտագնացութեան մը գլուխ անցած կ'այցելէ Հայաստան:

Իր այդ փորձառութիւնը հրատարակած է տեսաժապաւէնով մը՝ Armenia... A Homeland Discovered խորագիրով, ուր անգլերէն լեզուով կը ներկայացուի Հայաստանը, Հայութիւնը եւ անոր կրօնական ու ազգային պատկանելիութիւնը: Տեսաժապաւէն հրատարակուած է Anthony Cachatoorianի աշխատանքով:

Ուսանելի եւ հաճելի հրատարակում մը:

Կարելի է դիմել.-
St. John Armenian Apostolic Church
275 Olympia Way
San Francisco, CA 94131
Tel. (415) 661-1142

533 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



Dr. Missak Ekmekdjian
Chiropractor



Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծախոսակներու եւ մանուկներու Բարբոփաբարիք բուժում:
Գլխացաւ, վզի, մէջքի, յօդային եւ մկանային ցաւեր:
Ինքնաշարժի վթարի նետանքով պատասխան
վնասուածքներու բուժում:

Չեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

ԳՐԱԿԱՆ

ՊԱՆԴՈՒԽՏ ԶՈԳԻՆԵՐՈՒ ԵՐԳԻՉՐ ՅՐԱՆԴ (ՄԵԼԵՈՆ ԿԻՐՃԵԱՆ) (1859-1915)

ՊԷՊՕ ՍԻՄՈՆԵԱՆ

«Նախաապրիլեան Պոլսոյ մա-
մուլիմ մէջ, արագ եւ հարեւանցի
քննութիւն մը պիտի բաւէ հաստա-
տելու, թէ Մելքոն Կիրճեան անուանի
տակ այնտեղ թաղուած կը մնայ
սքանչելի գրագետ մը, բեղուն ներաշ-
խարհով եւ վճիտ գաղափարներով
առաջնորդ մը: «Գիւտ» մը ըրած ըլ-
լալու գոհունակութիւնը կ'ապրինք
գրեթէ, ու բոլորովին «նոր» արժէք մը
գտած ըլլալու խանդավառութիւնը»:
Ա. Ծառուկեան

Պանդուխտ հոգիներու սրտա-
յոյգ երգիչը՝ Մելքոն Կիրճեան հայ
գրականութեան մէջ առաւելաբար
ծանօթ է ու յայտնի՝ իր «Պան-
դուխտի Կեանքէն» գեղարուեստա-
կան արձակի մակարդակ մը նուա-
ճած գրութիւններով: Իր կենդա-
նութեան արդէն՝ Արփիար Արփի-
արեանի բառերով՝ «չատ հա-
մակրանք գրաւող հեղինակներէն
մէկը եղաւ»: Ընդուն գրութիւննե-
րը այն օրէն ասորին (1888, Նոյեմ-
բեր 28, «Մասիս») երբ մուտքի
գործեցին պոլսահայ մամուլին մէջ,
վաւերական ու խռովիչ գրագէտի
յայտնութիւնը կատարեցին: Գրա-
գէտ մը, որ իր կեանքին փորձառու-
թեամբ եւ խառնուածքին բերու-
մով կը պեղէր կեանքի նոր աշխարհ
մը: Խանութիւն եւ գոլիհներու խուլ
անկիւններու մէջ, ամէն օր կեանքը
ապրած ըլլալուն անէծքը շրթնե-
րուն, պարզ, համեստ, խոնարհ
մարդոց արհամարհանած աշխար-
հը: Հայ պանդուխտներու չպեղ-
ուած աշխարհը: Գիւտի մը գոհու-
նակութիւնը, Մելքոն Կիրճեանի
ժամանակակիցները, գրող թէ ըն-
թերցող ապրեցան իր օրին: Յակոբ
Օշականի վկայութեամբ՝ «Բաֆֆի-
էն յետոյ երկրորդ դէմքն է որ
ինքզինքը ըլլայ կարգացուցած,
բունի եւ խելացի թափի մը մէջ
պահելով հասարակութիւնը»:

Կեանքի միապաղաղ ընթաց-
քին մէջ, ցնցում յառաջացնող գրողն
է միայն, որ կը յաջողի «խելացի
թափի մը մէջ պահել հասարակու-
թիւնը» իր անհանգիստ եւ ան-
հանգստացնող գրականութեամբ: Ու
Մելքոն Կիրճեան գիւղէն քաղաք
գալով, իր յեղափոխական խառն-
ուածքովը եւ մշակած գրականու-
թեամբը խռովեց մարդոց անտա-
բերութիւնը՝ «չոր ու սեւ հացն
ուտելով տառապանք հագնող» պան-
դուխտներու սեւաբախտ ճակատագ-
րին նկատմամբ: Գեղարուեստա-
կան արժէքէն անկախաբար՝ հասա-
րակական ազդեցութիւն ներգոր-
ծեցին Մելքոն Կիրճեանի գրչի
արտադրութիւնները: Անվախօրէն
գրեց այսպէս. «Առանց ինչ ժամա-
նակ անցնելու, պէտք է այս բանին
ուշադրութիւն դարձնել. բաւական
չէ մեզի հիւնադանոցին դռները
բանալ պանդուխտին օրհասական-
ներուն առջեւ. պէտք է քանի մը
քայլ անդին անցնինք. քահանան
իր բաժինը ունի, ունեւորն իր
պարտաւորութիւնը, պատրիարք,
վարչութիւն, երեսփոխանութիւն,
առաջնորդք իրենց պարտքն ու-
նին: Պանդուխտութիւնն, եթէ այս-
պէս շարունակուի, մեր գաւառներն
անմարդի կ'ընէ այսօր կամ վաղը,
այս համոզումն ունեցէք, ասաւոր
ճշմարտութիւն է»:

Հատոր մը միայն, Նահատակ
Գրագէտներու Բարեկամներուն կող-

մէ հրատարակուած՝ 1931ին, Պան-
դուխտի Կեանքէն, ուրկէ կը բերե-
ղանայ իր պանդուխտ գաւառացի-
ներու երգիչի դիմագիծը: Բայց
ամբողջական դիմագիծը չէ Մել-
քոն Կիրճեանին: Իր գրական եւ
մտաւորական լրիւ հասակով չի
ներկայանար ու կանգնիր ան, հրա-
տարակուած հատորով: Նախաապ-
րիլեան Պոլսոյ մամուլին մէջ թաղ-
ուած գրական, ստեղծագործական,
հրապարակագրական, թարգմանա-
կան եւ ուսումնասիրական ցրուած
էջերը ոչ միայն երեւան պիտի
հանեն «սքանչելի գրագէտը», որուն
քիչ շատ ծանօթ է հայ մարդը,
այլեւ գաղափարապաշտ մարդը,
ողջմիտ մտաւորականը, խիզախ
հրապարակագիրը եւ իր ազգին ու
հայրենիքին ճակատագրով եռա-
ցող, պայքարող սրտցաւ հայը:

Անցաւ նահատակ, պայծառա-
տես գրագէտին ծննդեան հարիւ-
րամեակը: Թաւալեցաւ նահատա-
կութեան յիսնամեակը եւ հասաւ
ութսունամեակը, եւ տակաւին թաղ-
ուած կը շարունակէ մնալ իր
գրական ու մտաւորական կերպա-
րանքին այլ ԵՐԵՎԱՆԻՐ: Մեր հայ-
րենի պետական հրատարակչու-
թիւնն ալ իր օրին չչարժեցաւ այս
ուղղութեամբ: Արեւմտահայ մտա-
ւոր ժառանգութեան ուսումնասի-
րութիւնը կենսական պահանջ է:
Ձայն մամուլի թաղուած էջերէն
դուրս բերելը աւագ պարտակա-
նութիւնն է հայ մտքի ներկայա-
ցուցիչներուն՝ Սփիւռքի թէ Հայ-
րենիքի մէջ:

Ինչո՞ւ համար են մշակութա-
յին նպատակներու նուիրուած ֆոն-
տերը:

Կ'արժէ գրադիլ իրմով եւ
ուսումնասիրել հայ մարդուն որ-
պէս մտաւոր ժառանգութիւնը:
Առաջին հերթին հրատարակելով
ամբողջական հատոր մը իրմէ:

Մելքոն Կիրճեանի մուտքը
հայ գրականութեան ներս հե-
տաքրքրական սկիզբ մը կ'ունենայ:
Ու այդ սկիզբը կը յատկանշուի,
պատմուող դրուագին ընդմէջէն,
իր գրական նախափոճերուն նկատ-
մամբ մերժողական վերաբերումով
եւ գրագէտ Արփիար Արփիարեանի
գրական հոտառութեամբ: Պատ-
մութիւնը հետեւեալն է: Քարոզ մը
քննդատակելու համար, Մելքոն
Կիրճեան կը նստի եւ գեղեցիկ
աշխարհաբարով եւ յղիւն ոճով
յօդուած մը կը պատրաստէ: Ձայն
կը դրկէ «Մասիս»ին: Գրական
հոտառութեան եւ ճաշակէ գուրկ
խմբագիրները, կարդալէ ետք գամ-
բիւղ կը նետեն, ոճին մէջ նկատե-
լով հնաբոյր շեշտ մը: Պատահա-
բար, Արփիար Արփիարեան գամ-
բուղ նետուած թուղթերուն մէջէն
կը հանէ Մելքոն Կիրճեանի բաւա-
կան երկար յօդուածը: Կը կարդայ
համբերութեամբ: Կը հաստատէ
գրական նախանձախնդրութեամբ
թէ, գամբիւղ նետուելիք գրութիւն
չէ: Արտայայտութեան կերպին մէջ
գրաբարխառն հետքեր եւ ազդե-
ցութիւններ նկատելով հանդերձ՝
ոճի ինքնուրոյնութեան շեշտ մը կը
զգայ: Առանց վարանումի տպագ-
րութեան կը յանձնէ: Բայց անով չի
գոհանար: Կը հետաքրքրուի այս
նորայայտ գրիչով: Կը ծանօթանայ
ինքնութեան եւ կը քաջալերէ, որ
Մելքոն Կիրճեան պեղէ խաներու
խաւար անկիւնները եւ քակէ պան-
դուխտներու հոգեկան կնճիռները:

Այս կերպով է, որ 28 Նոյեմբեր
1888ի թիւին մէջ «Մասիս» գրա-
կան շաբաթաթերթի, Հրանդ գրա-
կան ծածկանունին ներքեւ կը սկսին
լրոյս տեսնել «Պանդուխտի Նամակ-
ները» որոնցմէ առաջինը «Արտա-
մետի ինձորը» նուիրուած էր Արփի-
ար Արփիարեանին: Խմբագիր
Արփիարեան՝ իր գրական սուր
հոտառութեամբ եւ նուրբ ճաշա-
կով՝ յայտնաբերելով կը քաջալերէ
եւ գրական ուղին կը հարթէ գրա-
գէտի տաղանդով օժտուած այնպի-
սի արժէքի մը, որուն ստեղծագոր-
ծութիւնները ըստ Յակոբ Օշակա-
նի՝ «Մեր մեծագոյն ու վաւերական
գրագէտներու զգայնութեան կը հա-
ւասարին»: Անդրադառնալով Ա.
Արփիարեանի քաջալերանքին, Մել-
քոն Կիրճեանի որպէս գրագէտ
յայտնաբերման մէջ, ուզեցինք շեշ-
տել այդ օրերուն եւ այս օրերուն
համար, գրական խոստումնալից
արժէքներու կազմաւորման մէջ,
խմբագիրներու բարերար կամ...
բացասական դերը:

Գրականութեան պատմութեան
տեսակետով շահեկան կը գտնենք
Արփիարեան-Մելքոն Կիրճեան
գրական շարաբերութեան խորհր-
դածութեան մղող այս եղանակը՝
տալով կարգ մը հատուածներ անոնց
յատկանշական էջերէն:

Մելքոն Կիրճեան իր «Ար-
տամետի ինձորը» առաջին պանդու-
խագիրին մէջ, Արփիարեանին ուղ-
ղելով խօսքը կ'ըսէ. «Մտերմական
սիրով կ'առաջարկես, սիրելիք իմ
Արփիար, որ հոտ Մասիսի համար
պանդուխտներու կեանքէն գրեմ:
Ի՞նչ գրեմ: Երէկ Պ. Շաքարեան
Արտամետու մէկ ինձոր տուաւ
ինձ: Ինչ երկրազուժութեամբ ձեռքս
երկարեցի. եւ ո՞րչափ ինձմով
փոյթ ունեցայ որ գրպանիս մէջ
չվատք է դիտել թէ անհամեմատ է
այն, երբ կը խորհիս որ երեսնօր-
եայ ճամբորդութեամբ անցած է
սրտիդ սիրած վայրերէն եւ Սեւ
ծովու անդունդներէն, եւ տակաւին
իր բուրումն անկորուստ կը պահէ:
Իր գո՞չնը, մո՞րթը: Մարած կարմ-
րութիւն մը ունի ինձորն իր
այտերուն վրայ, տեսակ մը գիծեր
որ տժգոյն դեղնութեան մէջ կ'ան-
հետին կամ անորոշ կերպով կը
խառնուին: Մորթը քաշուած է, եւ
ծերունու մը խորշոմեալ ու երի-
թացեալ կերպարանք ունի: Կը
ցաւիս իր վրայ:

«Առաջարկութիւնը ըստ
պատշաճի կը չիշեցնէ ինձ այդ
ինձորին նկարագիրն, եւ խորհր-
դաւոր պատկերն զոր իր վրայ ունի
պանդուխտութիւնն: Դեղնութիւն,

թարչամութիւն, առոյգ կենաց մէջ
երթացեալ ծերութիւն: Ի՞նչ բու-
րումն ունի այդ պանդուխտութիւնն
եւ ի՞նչ գրեմ:

«...Արդ, հարկ չկայ ըսել,
սիրելիս, թէ առաջարկութիւնդ
ընդունած եմ, եւ պարբերաբար
Մասիսիդ պիտի բերեմ Պանդուխ-
տի կեանքէն»:

Ու Մելքոն Կիրճեան, մէկը
միւսին ետեւէն ստորագրելով պան-
դուխտի նամակները, կը ցնցէր
հայոց հոգիները: Ու տասնհինգ
տարուան հեռաւորութենէ մը, ստո-
րագրուած թուականէն, ասա եւ
Արփիարեանի գնահատութիւնը.

«Թէեւ այս առաջին պատկե-
րին հրատարակման թուականէն ի
վեր տասնհինգ տարիներ անցան ու
մեր գլխէն ալ շատ մը փորձանքներ
- բայց տակաւին երէկուան պէս կը
զգամ սարսուռը որ Պոլսոյ հայոց
ոսկորներուն մէջէն սողոսկեցաւ
այն Շաբաթ օրը որ այս առաջին
Հրանդը պայթեցաւ: Պոլսոյ հայոց
հոգին կը վրդովուէր, ու քառասուն
հազար պոլսաբնակ պանդուխտնե-
րը իմացան թէ իրենց համար
խորհող մտքեր կան, իրենց համար
բաբախող սրտեր կան: Ղարիպն ու
պոլսեցին պիտի միանային:

Բայց Հրանդը պիտի չթուլ-
նար. պիտի շարունակէր առնակո-
րով ու զգայնիկ գրականութեամբ
մը պոլսեցիները ամօթահար ընել
պանդուխտներուն նկատմամբ
իրենց վարմունքին համար, պիտի
շարունակէր սրտերը խոցոտել,
արիւնել, պիտի շարունակէր հայ
հոգիները խաներուն վրայ սեւե-
ռուն պահել, մինչեւ որ գրական
պայթումին արձագանգէր ժողո-
վուրդին պայթումը»:

Տնտարիներ ապրած իր կեանքը
սահուն ու միանուագ ընթացած չէ:
Բանտ, աքսոր, հալածանք եւ կեանք
ի անապահովութեան մղձաւանջը
զինք տեսաբար հալածած են: Չէ
ընկրկած երբեք: Գաղափարապաշտ
մտաւորականի յեղափոխական նկա-
րագիրը եւ գաւառացիի, հայաս-
տանցի հայու հաւատաւորութիւնը
պահած են զինք ծառայութեանը
մէջ ազգին եւ հայրենիքին եւ
արժանաւորութեան մէջ գրագէտ
մարդու կեցուածքին: Մինչեւ մահ
ալ պահած է այս ոգին:

1915ի արհաւիրքի օրերուն,
երբ սարսափը պատած է արդէն
չորս դին, ձերբակալութիւններու
արշաւին ձեռնարկած է թրքական
ոստիկանութիւնը՝ Մելքոն Կիրճե-
ան Գ. Միթիարեանի հետ հան-
դիպման մը ընթացքին, այսպէս

Շաք.բ էջ 15

**GENERAL CONTRACTOR
BID REQUEST**

Bid Request General Contractors Qualified "B" licensed General Building Contractors are invited to submit a sealed bid on Project E09-13, Module 11.5 to the Burbank-Glendale-Pasadena Airport Authority by 2:05 PM, September 30, 2009. The Work includes, but is not limited to, the following: Installation of new doors, new windows, air conditioning, insulation and correction of some code deficiencies for five apartment buildings for a total of thirty-seven (37) units. Bidders may obtain construction documents from the Bob Hope Airport Web Site at bobhopeairport.com under Business Opportunities and are encouraged to do so prior to the mandatory pre-bid conference. All Bidders shall register with the Airport Engineering Department either via web site or in person. Bids submitted by firms who have not registered with Airport Engineering will be considered non-responsive. A mandatory Pre-bid conference has been scheduled for September 10, 2009, at 10:00 A.M. at the Bob Hope Airport Engineering Offices, 2800 N. Clybourn Ave., Burbank, California. Attendance at one or the other conference is Mandatory.

ՊԱՆԴՈՒԽՏ ՅՈՒԿՆԵՐՈՒ ԵՐԳԻՉԸ

Շարունակում է էջ 14-ին

կ'արտայայտուի.

«Բոլորիս ցանկը առնուած է. մէկիկ մէկիկ, իմ անունս ալ մէջը. անձամբ կարգացի, տասհինգերորդն եմ շարքին. դապատրուած ենք, կրնանք ձերբակալուիլ մէկ օրէն միւսը...»:

Ի՞նչ կը մտածէք հարցումին, իր տուած պատասխանը կ'ըլլայ հետեւեալը. «Ի՞նչ կրնանք մտածել, ինչ որ ըլլայ այս բազմութիւնը, մենք ալ անոր հետ. ժողովուրդին հետ, փրկուէր միայն երիտասարդութիւնը, կը բաւէ...»:

Սոյն տողերուն մէջէն Մելքոն Կիւրճեանի մէջ ի յայտ կու գայ մտաւորական այն տիպարը, որ իր ճակատագիրը կը նոյնացնէ ժողովուրդին վերապահուած ճակատագրին հետ: Խիզախ ու արի նման իր բանաստեղծ գրչեղբոր՝ Ռուբէն Սեւակին: Բացառիկ հմտութեամբ մը եւ խորունկ գարգացմունով չէր յատկանշուեր Մելքոն Կիւրճեանի մտաւորական արժանիքները: Համեստ էր իր մտաւոր պաշարը: Սակայն, այն գաղափարապաշտութեամբ, որ կը թեւաւորուէր իր հոգին եւ կը սաւառնէր իր միտքը՝ զինք արժանի կը դարձնէն հիացական յարգանքի, իր գրչի վաստակէն անկախաբար՝ որպէս հասարակական կոչումով եւ բարձր գիտակցութեամբ օժտուած մտաւորական գործիչ մը: Եւ արդէն ինչ կ'արժեն ձեռք ձգուած ծով հմտութիւնները եւ ուսման բարձրագոյն տիպարները, երբ անոնք ի սպաս պիտի չգրուին հայրենիքի եւ ժողովուրդի բարօրութեան ծառայող ընդհանրական նպատակներու: Մելքոն Կիւրճեան իր քիչով աւելի նուիրաբերեց՝ որպէս գաղափարաշունչ դաստիարակութեան հաւատացող հայկաբան ուսուցիչ, մտքի պայծառատեսութեամբ օժտուած ողջամիտ հրապարակագիր եւ ազգի ու հայրենիքի սիրով տաղանապոյտ եւ խոսովող հայրենասէր գործիչ: Ու առանց յառելու այս կամ այն կուսակցութեան: Պահեց իր մտածելու անկախութիւնը՝ ունենալով հանդերձ իր որոշակի եւ յստակ ազային աշխարհայեցացքը:

Տիպար եւ գաղափարապաշտ ուսուցիչը հայոց մէջ ազգային-հասարակական գործունէութեան դերակատար կը համարուի: Այս տեսակէտով Պոլսոյ գաղափարապաշտ սերունդի պատրաստութեան մէջ հիմնական եւ նշանակալից դեր կատարեց: Պոլսոյ զանազան վարժարաններուն մէջ դասաւանդած նիւթերը - գրաբար, աշխարհաբար, գրականութիւն - առիթ կու տային իրեն՝ հայութեան անցեալի ու ներկայի փառքերով խանդավառ սերունդ մը իր հաւատաւոր շունչով վարակելու: Իրագեկներու համաձայն՝ իր շունչին ջերմութիւնը աշակերտներուն եռանդով եւ անձնուիրութեամբ փոխանցող ուսուցիչի տիպար մը եղած է Մելքոն Կիւրճեան այն բոլոր վարժարաններուն մէջ, ուր պաշտօնավարած է: Եւ անկախ իր հրապարակագրական էջերուն մէջ արտայայտած յեղափոխական գաղափարներէն, որոնք երբեք հաշտ աչքով չէին դիտուեր թուրք գրաքննիչներու կողմէ, ուսուցիչի ծառայութիւնը եւս պատճառ կը հանդիսանար իր աքտորական կեանքին եւ իր դէմ ի գործ դրուած մշտական հալածանքին:

Թուրք իշխանաւորներուն կողմէ հալածուած գրագէտ մը եղած է Մելքոն Կիւրճեան: Իր պայքարող

խառնուածքին եւ անտեղիտալի նկարագրին գիծերով: 1893ին, եօթը օրուան նշանուած էր, երբ կը ձերբակալուի եւ ամիս մը բանտ կը մնայ: 1896ի կոտորածներու ընթացքին, թուրք կառավարութեան աննահանջ հետապնդումին կ'ենթարկուի: Ծպտուելով փախուստ կու տայ եւ ի վերջոյ կ'ապաստանի Վառնա: Սկիւտարի տունը հսկողութեան տակ առնուելով խիստ խուզարկութեան կ'ենթարկուի:

«Տանը տախտակամածները եւ ձեղունները կը քակուին, ոչ միայն զինքը կը փնտռեն, այլ նաեւ զէնք եւ ուսմբ: Կինը, ամբողջ գիշեր մը, մեկուսացուած գրեթէ 10-11 ժամ սպառնալիքի տակ, խիստ հարցաքննութեան կ'ենթարկուի, իր ամուսինն տեղը մատնանշելու համար: Ամէն փորձ ապարդիւն կը մնայ: Մեծ թիւով ձեռագիրներ ու պատկերներ կը տարուին. անարգելով կը պատռեն խրմեան Հայրիկի նկարը»:

Վառնայի մէջ պարապ չ'անցընէր ժամանակը: Հոն հաստատուած հայ գաղթականներու ուսման համար կը բանայ Արծրունեան վարժարանը: Բայց երկար չի մնար հոն: Իր ընտանեկան հարազատներուն սէրը եւ Պոլսոյ ազգային կեանքի եռուզեռը զինք կը քաշեն մագնիսի քաշողականութեամբ դէպի Պոլիս: Չ'ուշանար ձերբակալութիւնը: 1898ին դարձեալ բանտն է: Վեց ամիս հեծելէ ետք, բանտի անարեւ խուցին մէջ, կ'աքտորուի Գասթէմունի, ուր բարցարձակապէս իրեն արգիլուած էր ուսուցութեամբ եւ գրականութեամբ զբաղիլ: Չէր կրնար քաղաքէն հեռանալ: Անձնական կեանքը կալանքի տակ առնուած էր: Ամէն օր պէտք է ներկայանայ ոստիկանատուն, իր ներկայութիւնը ապացուցող ստորագրութիւնը դնելու համար: Իր կեանքին համար դրուած արգելքներուն եւ անձնական կեանքը խիստ հսկողութեան տակ պահուելուն՝ Մելքոն Կիւրճեան պարապեցաւ մտաւորական աշխատանքներով: Թարգմանական աշխատանքներ կատարեց: Աքտորական օրերուն թարգմանած է Ռոմանի Յիսուսի կեանքը եւ Թէ Ինչ Կը խորհին Կիւրճեանը իրենց Ամուսիններու Մասին գիրքերը: Առաջինը անտիպ, երկրորդը՝ հրատարակուած: Աքտորական օրերուն, թէ այլ ժամանակ գրուած ուսումնասիրութիւն մըն ալ ունի Մելքոն Կիւրճեան Մեսրոպ եւ Սահակ խորագրուած: Եթէ ասոնց վրայ աւելցնենք նաեւ գրաբար հայերէնի դասաւանդութեան նուիրուած Գրաբար Լեզու դասագիրքը, կազմած կ'ըլլանք մտքի աշխատաւորի հետաքրքրութեան շրջագիծը եւ այդ ուղղութեամբ վաստակին պատկերը:

1906ին Գասթէմունիի մէջ եւս մատնուելով՝ բանտային կեանք կ'ապրի երկու ամիս, որմէ ետք դարձեալ կը վերադառնայ Պոլիս, ու կը մնայ մինչեւ 1915 Ապրիլ 11ի (Ապրիլ 24) գիշերը:

Իր մտաւոր վաստակին ենթահողը եւ հոգեյատակը եւս կը կազմէ իր գաղափարապաշտութիւնը: Գործ մը, աշխատանք մը, երկ մը նպատակի մը ծառայցնելու շարժառիթէն մղուած եւ այդ գրգիռներով ապրող մտաւորականն է: Ու իր բազմիցս բանտարկուած եւ աքտորուած գրագէտի եւ մտաւորականի կեանքին օրինակը՝ այս օրերու մտաւորականներուն եւ գրագէտներուն համար իր ներշնչող, ուսանելի եւ ներգործ թելադրական

նութիւնը կը պահէ:

Արեւմտահայ նախաեղեռնեան գրագէտները ընդհանրապէս իրենք գիրենք սպառած են նաեւ հրապարակագրութեան մէջ, որպէս խմբագիր կամ յօդուածագիր: Մելքոն Կիւրճեան բացառութիւն չէ կազմած: Իր ստեղծագործական էջերուն վրայ բեռ մը չէ իր հրապարակագրական վաստակը համոզում ուսկզբունք ունեցող գրագէտի դիրքորոշումները ի յայտ կու գան Մելքոն Կիւրճեանի հրապարակագրական էջերուն մէջ: Վեր մնալով նեղմտութենէ, միշտ մնալով անկախ մտաւորականի արժանաւորութեան վրայ, Մելքոն Կիւրճեանի հրապարակագրական էջերը կը յատկանշուին մտածումի ողջմտութեամբ, գաղափարներու համարձակութեամբ եւ կեցուածքի յստակութեամբ: Դիւրին չէ հայ կեանքի մէջ ողջմտութեան բանբերը հանդիսանալ: Թշնամիներ անպակաս կը մնան:

Ողջմիտ մամուլի եւ ողջմիտ հրապարակագրի դերին ակնարկելով Գրիգոր Զօհրապ «Մասիս» օրաթերթի 1892ի համարին մէջ կը գրէր. «Եւ սակայն, ճշմարիտ թերթ մը չի կրնար հաշտ երեւնալ ամէնուն, անձուէր բարեկամներ ու ոխերիմ թշնամիներ կ'ունենայ միշտ: Իր բարոյական յաջողութիւնը ատով պիտի չափէի: Պէտք է որ մէկը անարգէր գայն ու միւսը յարգէր: Այն ատեն իր գոյութեան պիտի հաւատայի: Կապոյտ կամ սեւ, փոյթ չէ, բայց աչքերուն գոյնը կ'ուզէի տեսնել: Գամէլճօսի այլակերպութիւններէն կը վախնամ: Ամէն ճաշակի պատշաճելու ջանադիր թերթ մը՝ իմ սիրածս չէ: Ընթերցողները աւելի պիտի շահին չոր հաց ուստելով ամէն օր, քան թէ սպասելով այլափոխուող մանանայի մը բազմակերպիկ համեմներուն»:

Ապահովաբար, յօդուածագիր եւ հրապարակագիր Մելքոն Կիւրճեան, իր գրիչին դանակէ շեղբով երբ քննադատած է հայ կեանքին անմաքուր կեցուածքները, ունեցած է բարեկամներու շարքին իր «ոխերիմ թշնամիները»: Իր բազմիցս բանտարկութեան առիթներով այդ անմաքուրները տիպար դեր մը կատարած ըլլալու են...:

Մելքոն Կիւրճեանի հրապարակագրական էջերուն սկզբունքային մեկնակէտ ծառայած է «Մաքուր ըլլանք» նշանաբանը. «...Ու եթէ այսպէս շարունակենք, գիրար բզքտելով, մեր դատապարտութիւնը կ'ըլլան ատոնք: Քիչ մը լայն հորիզոն բանանք հոգիներու, որոնք սեղմուեցան, ճարակ չտանք փոքր ու փոքր կրիքերու, որոնք ճանճերու պէս թարախով ու փտութիւնով կը սնանին: Մաքուր ըլլանք»:

Ու հակառակ անոր, որ իր խառնուածքին մասին կատարուած հարցարանի պատասխանելով՝ «նկարագրիս առաջին գիծը՝ ԿՈՒԻՒ» կը յայտարարէ, բայց հանրային կեանքի մէջ, գրչապայքարի այն եղանակը, որ իր բառերով՝ «անսպառ, անհատնում ուժ սա մեր հայհոյանքի արտագրութիւնը», կը դատապարտէ «Ալ Վերջ Տանք Կուրիւն» ողջմտութեան հրաւիրող յօդուածով: Կարգ մը հատուածներու մէջ բերումը կը վկայէ իր այն սրտցաւութեան մասին, զոր ան ցոյց տուած է հայ կեանքի թոհուրոհին մէջ, կրքոտ պայքարներու ընթացքին:

«Մենք, ամէն բանէ աւելի, ամէն կիրքերէ վեր, պէտք է գիրար հասկանք ու անպատճառ սիրենք գիրար, այն անունի տակ ուր չարչարուած ենք, հալածուած դարբերով, վտանգուած պատմական

կեանքով մը:

«Ամենէն ետքը կը դառնամ խմբագրող եղբայրներու» խնդրելու որ, կարելի եղածին չափ շուտ, հովին առջեւ դարտկած ըլլան ատելութեան, թշնամանքի բոլոր մթերանոցները, եւ նոր կեանք մը սկսինք յանուն խեղճ ժողովուրդի մը կրած ցաւերուն»:

Մելքոն Կիւրճեանի «Սաղիմացիները» խորագրուած յօդուածը՝ ճշմարտութիւնները, առանց բառերը ծամծմելու արտայայտող խիզախ հրապարակագրի համարձակախօսութիւնը ցոյց կու տան: Ու ինչպէս չհիանալ, այս օրերուն համար եւս իր այժմեւութիւնը չկորսնցուցած Մելքոն Կիւրճեանի հրապարակագրական այս էջով, որ միաժամանակ մեր ժողովուրդին ընդհանրական շահերուն նկատմամբ անտարբեր չմնացող գրագէտի շահեկան հետաքրքրութիւնը կը ցուցանուի: Այսօր գրուած յօդուածի մը թարմութիւնը կը պահեն: Տանք նմոյշ մը:

«Եւ սակայն ապաժաման ազգասիրութիւն, որ կ'երեւի թէ ծնունդ եւ սնունդ սկսած է առնել վանքին պարիսպներուն բոլորտիքը: Լաւ. ո՞ւր էին հապա մեր այդ ազգայինները, ինչո՞ւ ցոյց չտուին իենց բարեպտուղ գոյութիւնը, երբ վանքը իսկապէս աւագակութեան վայր կը դառնա տարիներով. ինչո՞ւ ճիգ մը, բողոքի թեթեւ արտայայտութիւն մը չըրին երբ բարեպաշտ շնորհունակներու ձեռքով վանքին գոհարեղէնները, սրբապիղծ մատներով խաչերէն, սաղաւարտներէն, թագերէն կրգուած աւետարաններուն արծաթապատ կողքերը յափշտակուած, թանկագին գորգերը ծրարուած, ճամբայ կ'ելլէին դէպի բուրգերու հայրենիք՝ կարմրուկ ոսկիներու վերածուելու: Ծնորհաւորելի չէ՞՞ այդ նախանձաւորութիւնը սաղիմեան մեր ազգայիններուն քով:

«Մեր կողմէ անոնց ըսելիքը անուշտ սա է, թէ սաղիմեան ազգայինները մեզի համար նորութիւն են. ազգը լաւ գիտէ թէ վանքին բոլորտիքը ապաստան գտած է թշուառական արարածներու թափթըփուք մը, որ այսօր հայ է երբ շահ ունի, վաղը դպտի է երբ վախ ունի, հետեւեալ օրը չգիտեմ ինչ որակութիւն: Համիտի օրով պարզապէս փորձանք եղած են վանքին համար»:

Ահա թէ ինչու ուզեցինք յամենալ նաեւ հրապարակագիր Մելքոն Կիւրճեանի արժանիքներուն առաջ: Տարբեր մարդ էր ան, տարբեր գրագէտ, տարբեր հրապարակագիր: Ոգիով, շունչով ու տեսլականով: Նահատակ միւս գրագէտներուն նման: Իր տարբեր ըլլալու հանգամանքը ցոյցացուած է «Արիւնտ ֆետուր» գեղարուեստական էջին մէջ, ուր մենակութեան օրերու յիշատակին կապուած որսորդական պատմութեան ընդմէջէն, կը բացայայտէ իր նկարագրին մարդկայնական երեսը, ոճի իր համագոր նկատելով Արագիլի մը սպանութիւնը: Ու այն հոգեվիճակը, որ կ'ապրի ու կ'արտայայտէ «Արիւնտ ֆետուր»ին մէջ, իր կեանքի ընթացքին կը դառնայ գիտակցական ուղի: Քանի մը տողով տանք պատմութիւնը, հասնելու համար իր ինքնուրոյն ու յատկանշական եզրակացութեան:

Մանկութեան երկու ընկերներով կը հալածեն գարնան աւետարբեր Արագիլի մը: Ժամեր տրամադրելէ ետք, լինալ էլլելով, ի վերջոյ ընկերով քարի հարուածով կ'իջնայ

ՅԻՇԱՏԱԿԵԼԻ ԴԵՊԹԵՐ ԻՐԱՆԱՅԱՅ 11 ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԵԿՆՈՒՄԸ ՅԱՅԱՍԱՆ 1946 ԹՈՒԻՆ

Ն. ՏԵՐԵԱՆ

1945 թուականի Դեկտեմբերին, սիրիւն քահանայութեան հայրենադարձի լուրը առաջ բերեց աննախընթաց ոգեւորութիւն իրանահայութեան մօտ: Ներգաղթի նախապատրաստական աշխատանքները կազմակերպելու համար թեհւանում, թաւրիզում ու Նոր Զուղայում, ինչպէս նաեւ բոլոր շրջաններում, կազմուեցին ներգաղթին օժանդակող մարմիններ:

Ներգաղթի կարաւանները շարժուելուց առաջ, դեռեւս 1946 թուականի Մայիսի 10-ին Հայաստան մեկնեց հայրենադարձների առաջին խումբը, բաղկացած 11 ուսանողներից, որոնցից մի քանիսը հետագային իրենց ներդրումն ունեցան հայ մշակութի ոլորտում:

Յիշեալ խմբին մաս էին կազմում Յովհաննէս Բաղաւանը, Աբիկ Աւագեանը, Երուանդ Մանարեանը, Հրայր Մովսիսեանը, Լիւսիա Առաքելեանը, Մանուկ Բարսեղեանը, Համլետ Եգանեանը, Ալբերտ Հայրապետեանը, Վաչիկ Հասարթեանը, Սմբատ Ղազարեանը, Լուիզա Յովհաննիսեանը:

Իրանից Հայաստան ներգաղթողների առաջին կարաւանը շարժուեց 1946 թուականի Յուլիսի 14-ին Արաքի (Սուլթանաբադի) շրջանի Զափլաղ գաւառի Հոսէյնաբադ գիւղից: Յուլիսի 20-ին մեկնեցին

Թաւրիզի, իսկ Օգոստոսի 11-ին թեհւանի առաջին կարաւանները:

Պիտի նշել որ Յովհաննէս Բաղաւանը դարձաւ յայտնի երգիչ, ստանալով ժողովրդական երգչի կոչում: Աբիկ Աւագեանը աւարտելով գրականութեան համալսարանը նուիրուեց գրականութեան եւ գրեց մի քանի վէպեր եւ պատմուածքներ: Երուանդ Մանարեանը այսօր Հայաստանում լայն ճանաչում ունի որպէս դերասան եւ բեմադրիչ: Հրայր Մովսիսեանը դառնում է բանասիրական Գիտութիւնների թեկնածու, իրանագէտ, բանասէր եւ մանկավարժ: Մանուկ Բարսեղեանը վիրաբոյժ, բժշկական գիտութիւնների թեկնածու: Համլետ Եգանեանը՝ պատմաբան եւ արեւելագէտ, Պատմական Գիտութիւնների դոկտոր-փրոֆէսոր: Ալբերթ Հայրապետեանը կենսաբանական գիտութիւնների դոկտոր, նեարդաֆիզիոլոգ: Վաչիկ Հասարթեանը անուանի դաշնակահար, խմբավար եւ մանկավարժ:

Ահա այսպիսի դիրքերի հասան իրանահայ 11 ընտրեալ երիտասարդները, որոնք մեկնեցին հայրենիք եւ իւրաքանչիւրը յայտնի դարձաւ իր նախասիրած ասպարէզում: Հայրենիքը իր հարազատ գիրկն առաւ իր շնորհալի գաւակներին եւ նրանց հասցրեց գիտութեան եւ արուեստի բարձունքներին:

ԱԼԵՐԳԻԱ՝ ԱՐԵՒԻՑ

ՍՈՒՍԱՆՆԱ ԱԶԱՏԵԱՆ

Արեւը յաւելեալ գովազդի կարիք չունի: Բոլորս շատ լաւ գիտենք նրա բացասական ազդեցութեան մասին: Դրանք կարող են արտայայտուել բաւական լուրջ այրուածքի տեսքով կամ առաջացնել մաշկի քաղցկեղ: Բացի այդ, օրինակ, Մայիս ամսին, երբ արեւի ճառագայթներն աւելի ազդեալ են դառնում, կարող է առաջանալ ալերգիա՝ ֆոտոդերմատոզ: Բժիշկները գտնում են, որ արեւն ինքն իրենով ալերգիա չի առաջացնում, քանի որ ալերգենի բաղադրութեան մէջ պէտք է լինի լիովին սպիտակուց: Արեւի լոյսը, յատկապէս արեւը՝ պարզապէս նպաստող գործօն կարող է հանդիսանալ ալերգենների համար, որ կուտակուած են մարդկանց օրգանիզմում, ովքեր առողջական այլ խնդիրներ ունեն: Հիմնականում առողջ մարդն արեւից ալերգիա չի ունենում: Այդ պատճառով, արեւից ալերգիա ունենալու դէպքում, պէտք է մտածել ընդհանուր առողջութեան մասին: Յատուկ ուշադրութիւն պէտք է դարձնել լեարդի աշխատանքի վրայ:

Յիւրութեան ժամանակ եւս հնարաւոր է՝ առաջանալ ալերգիա արեւից: Որոշ դեղորայքի օգտագործումը եւս կարող է հանգեցնել ալերգիայի առաջացման: Այդ խմբին են պատկանում որոշ հակաբորբոքային պրեպարատներ, սուլֆանիլամիդային խմբի պրեպարատներ եւ այլն: Նաեւ կարծում են, որ արեւի լոյսի նկատմամբ ալերգիան կարող է կապուած լինել պիգմենտային նիւթափոխանակութեան խանգարման եւ ընդհանուր նիւթափոխանակութեան խանգարման հետ:

Ֆոտոդերմատոզի առաջին ախտանշանները կարող են զարգանալ արեւի տակ գտնուելուց մի քանի ժամ յետոյ: Առաջանում է արեգակնային էկզեմա կամ եղնջատենդ՝ մաշկը քոր է գալիս, կարմրում է ու ծածկուած մանր բշտիկներով, եւ կարող է զարգանալ մաշկի եւ լորձաթաղանթի այտուց: Արեւային եղնջատենդը ոչ յաճախ հանդիպող հիւանդութիւն է: Կարող է հանդիպել դանդաղող արեւային եղնջատենդ, որն առաջանում է արեւի տակ գտնուելուց 118-72 ժամ յետոյ: Աւելի զգայուն հիւանդների մօտ կարող է առաջանալ բրոնխոսպազմ, կարող է ընկնել արեան ճնշումն ու ընդհուպ կարող է հասնել մինչեւ գիտակցութեան կորստի:

Արեւային ուժեղ ալերգիայի առկայութեան դէպքում պէտք է հնարաւորինս խուսափել արեւից, դուրս չգալ առանց պաշտպանիչ քսուքի օգտագործման: Նման դէպքերում գլխաւոր ախտանշանը քորն է, որն անցկացնելը շատ դժուար է: Արեւի տակ դուրս գալուց առաջ խորհուրդ չի տրուում օգտագործել դեզոդորանտներ, մարմնի օծանելիքներ ու հոտաւէտ իւղեր, յատկապէս՝ ցիտրուսային:

Ի՞նչ անել, եթէ արեւի տակ անցկացրած 1 օրուայ պատճառով ամբողջ դէմքը ծածկուել է եղնջատենդի բշտիկներով, որն էլ հասաւոր քոր է առաջացնում: Ֆոտոդերմատիտի բուժումը կատարուած է 2 ձեւով՝ տեղային, այսինքն՝ արտաքին եւ ներքին: Մաշկի գրգռուած մասին կարելի է քսել քսուքներ, որոնք պարունակում են լանոլին, իհարկէ, բժշկի խորհրդով: Ժողովրդական միջոցներից մաշկը սառեցնում եւ քորը հանգստացնում են կաղամբի թերթիկները, կարտոֆիլի կամ վարունգի բարակ շերտերը: Մաշկի ուժեղ գրգռուածութեան դէպքում բժիշկը կարող է նշանակել հորմոնալ պրեպարատներ: Ներքին բուժման համար սովորաբար ընդունում են պրեպարատներ, որոնք նպաստում են լեարդի աշխատանքի, ինչպէս նաեւ օրգանիզմի ընդհանուր նիւթափոխանակութեան նորմալացմանը: Որպէս կանոն, դրանք հակաօքսիդանտներ են, B խմբի վիտամիններ, C եւ E վիտամիններ:

Շատ ուժեղ քորի ժամանակ բժիշկը նշանակում է հակաօքսիտամինային պրեպարատներ, որոնք արեւի ազդեցութեամբ քոր չեն առաջացնում: Բուժումը սովորաբար տեւում է մի քանի օրից մինչեւ մի քանի շաբաթ: Ֆոտոդերմատիտի մի քանի անգամ կրկնուելը կարող է հանգեցնել էկզեմայի առաջացման: Այդ պատճառով, եթէ ֆոտոդերմատիտը կրկնուած է երկրորդ անգամ, ուրեմն՝ սուեալ մարդուն արեւը հակացուցուած է: Բայց շատերն էլ մէկ անգամ արեւից ալերգիա ունենալուց յետոյ, մտածում են, որ արեւային լոգանքը հակացուցուած է իրենց: Բայց դա այնքան էլ այդպէս չէ: Արեւային լոգանքը ընդունելու որոշակի անվտանգության կանոններ պահպանելու դէպքում ամէն ինչ կարգին կը լինի: Իսկ երեխաները՝ մեծանալով, գրեթէ միշտ յաղթահարում են արեւային ալերգիան:

ԿՐ ՏԵՍՆԵՍ ԱՐԴԵՕՔ ԱՆԱՅԻՏ ԵՐԵՄԵԱՆ

Կը մեռնե՞մ արդեօք ու էլ չեմ տեսնի,
Սարերս հայոց,
Արտերըս հայոց,
Ծաղիկը խոնարի
Մեր խոր ձորերի,
Այն տունը խոնարի իմ հին օրերի,
Երկինքը մեր լուրթ,
Քաղաքը մեր ցուրտ,
Աստղերն այն սուտակ,
Որոնց աչքի տակ,
Ես իմ մանկութեան
Երազն ապրեցի,
Թիթեռ բռնեցի,
Կանաչ ու կարմիր
Թփերի վրայ:

Ելայ բարձրացայ
Սարերի գլխին,
Մնացի մեճակ
Գիշերուայ մութին:
Կը տեսնեմ արդեօ՞ք տունս
հայրենի,
Այն օրօրոցը, որի մէջ պառկած,
Ինձ անուշ մայրս օրօր էր
ասում,
Եւ իմ քնելուն լռիկ սպասում:
Կը տեսնե՞մ արդեօք,
Թէ լուռ կը գնամ,
Կ'անցնեմ աշխարհից
Եւ կը փրկուեմ, բարուց ու
չարից:

www.massisweekly.com
Updated every Friday


WAHIB'S MIDDLE EAST RESTAURANT

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԱՄԵՆԱՀԱՄԵՂ ԺԱԾԱՏԵՍԱԿՆԵՐ:
ՈՒՆԻ ՆԵՐՔԻՆ ԵՒ ԲԱՅՕԴԵԱՅ ՆՍՏԵԼՈՒ ԲԱԺԻՆՆԵՐ
Բաց է Ծաբաթը 7 օր: Ունի յատուկ սրահ հաւաքոյթներու

(626) 281-1006

(626) 576-1048

910 E. Main Str. - ALHAMBRA, CA



**1785 E. Washington Blvd.
Pasadena, CA 91104
(626) 794-7026
Open Monday - Saturday
9 am - 8 pm**

MISSION
Wine & Spirits

**825 W. Glenoaks Blvd.
Glendale, CA 91202
(818) 242-0683
Open Monday - Saturday
9 am - 8 pm**

HUGE SELECTION!

EVERY DAY LOW PRICES!

 Johnnie Walker Red Label \$15.99	 Johnnie Walker Black Label \$19.99	 Johnnie Walker Green Label \$37.99	 Johnnie Walker Gold Label \$47.99	 Johnnie Walker Blue Label \$119.99	 Grey Goose Vodka \$21.99	 Smirnoff Vodka \$8.99	 Absolut Vodka \$14.99	 Skyy Vodka \$8.99	 Ketel One Vodka \$16.99
 Gazadores Reposado \$19.99	 Patron Silver Tequila \$29.99	 Jose Cuervo Especial \$10.99	 Don Julio Blanco Tequila \$29.99	 Don Julio 1942 Tequila \$77.99	 1800 100 Proof Silver \$17.99	 Hennessy VS Cognac \$21.99	 Hennessy VSOP Cognac \$32.99	 Courvoisier VS Cognac \$18.99	 Jacques Cardin VSOP Cognac \$15.99
 Dewar's 12 Years \$17.99	 Dewar's White Label 1.75L \$25.99	 Crown Royal Canadian Whisky \$14.99	 Captain Morgan Rum \$10.99	 Ciroc Vodka \$16.99	 Fortune Vodka \$17.99	 Robert Cavalli Vodka \$38.99	 El Massaya Arak \$19.99	 Gantous & Abou Raad Arak \$11.99	 NOY 5 Years Armenian Brandy \$16.99

*This ad expires on 09/13/09 • We reserve the right to limit quantities • Sales tax excluded • Prices subject to change without notice • No CCs • All items are 750ml in size unless specified.

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԽՄԲԻ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ ՄՐՑԱՇԱՐԱՅԻՆ ԱՂՅԻՄԱԿԸ ԳԼԽԱԴՈՐՈՒՄ Է «ՓԻԼԻԿ»Ը

Օգոստոսի 29-ին եւ 30-ին կայացան Հայաստանի ֆուտբոլի բարձրագույն խմբի առաջնութեան 20-րդ փուլի հանդիպումները, որում գրանցուեցին հետեւեալ արդիւնքները. «Փիլիկ» - «Շիրակ»՝ 4-0, «Ուլիս» - «Բանանց»՝ 1-0, «Կիլիկիա» - «Միկա»՝ 3-2, «Արարատ» - «Գանձասար»՝ 1-2:



Մրցաշարային աղիւսակը 47 միաւորով միանձնեայ գլխաւորում է «Փիլիկ»ը: Առաջատարին յաջորդում են «Միկա»՝ 41, «Ուլիս»՝ 39, «Բանանց»՝ 32, «Գանձասար»՝ 29, «Շիրակ»՝ 16, «Կիլիկիա»՝ 15, եւ «Արարատ»՝ 7 միավորով:

Այժմ առաջնութիւնում խաղադադար է յայտարարուած, քանի որ Հայաստանի ազգային հաւաքականը պէտք է նախապատրաստուի աշխարհի 2010թ.-ի առաջնութեան ընտրական փուլի խմբային մրցաշարի ծրագրով Բոսնիայի եւ Բելգիայի ընտրանիների հետ Սեպտեմբերի 6-ին եւ 9-ին կայանալիք խաղերին:

Մրցաշարային աղիւսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Փիլիկ	20	14	5	1	39-8	47
2. Միկա	20	13	2	5	44-23	41
3. Ուլիս	20	12	3	5	31-14	39
4. Բանանց	20	10	2	8	27-20	32
5. Գանձասար	20	9	2	9	17-27	29
6. Շիրակ	20	3	7	10	16-41	16
7. Կիլիկիա	20	4	3	13	17-32	15
8. Արարատ	20	1	4	15	9-35	7

Վ. ՄԻՆԱՍԵԱՆԸ ՀՐԱՊԱՐԱԿԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՒԱՔԱԿԱՆԻ ԿԱԶՍԸ

Հայաստանի ազգային հաւաքականի գլխաւոր մարզիչ Վարդան Մինասեանն հրապարակել է այն ֆուտպոլիստների ցուցակը, ովքեր կը նախապատրաստուեն Սեպտեմբերի 5-ին եւ 9-ին կայանալիք 2010 թուականի Աշխարհի Գաւաթի ընտրական փուլի Պոսնիայի եւ Հերցեգովինայի եւ Բելգիայի հաւաքականների հետ հանդիպումներին: Դարպասապահներ՝ Գէորգ Կասպարով՝ «Ուլիս», Ստեփան Ղազարեան՝ «Բանանց», Գրիգոր Մելիքսեթեան՝ «Փիլիկ»:

Պաշտպաններ՝ Ռոբերտ Արզումանեան՝ «Ռանդերս» Դանիա, Սարգիս Յովսէփեան, Վահագն Մինասեան՝ երկուսն էլ «Փիլիկ», Հրայր Մկրտչեան՝ «Ուլիս», Ալեքսանդր Թադեւոսեան, Աղուան Մկրտչեան՝ երկուսն էլ «Միկա», Էդուարդ Կակոսեան՝ «Բանանց»: Կիսապաշտպաններ՝ Արարատ Առաքելեան՝ «Մետալուրգ» Դոնեցկ Ուկրաինա, Արթուր Եղիզարեան, Կառլեն Մկրտչեան՝ երկուսն էլ «Փիլիկ», Դաւիթ Գրիգորեան, Կարէն Ալեքսանեան՝ երկուսն էլ «Ուլիս», Արտաւազ Բարամեան՝ «Տիմիշուարա» Ռումինիա, Արտակ Գրիգորեան՝ «Արարատ»:

Յարձակողներ՝ Հենրիխ Մխիթարեան՝ «Մետալուրգ» Դոնեցկ Ուկրաինա, Եղիա Եւրոպեան՝ «Մաքբաբի» Թել-Ավիվ Իսրայէլ, Յովհաննէս Գոհարեան՝ «ԲԱՏԵ» Բելառուս, Արման Քարամեան՝ «Տիմիշուարա» Ռումինիա:

Հայաստան-Պոսնիայի եւ Հերցեգովինա հանդիպումը տեղի կ'ունենայ Սեպտեմբերի 5-ին Վազգէն Սարգսեանի անուան «Հանրապետական» մարզադաշտում ժամը 20:00-ին: Այս խաղը կը սպասարկի Հոլանդիայի մրցավարական բրիգադը՝ Էրիկ Բրամհարի գլխաւորութեամբ:

Իսկ Հայաստան-Բելգիա հաւաքականների խաղը կը կայանայ Սեպտեմբերի 9-ին «Հանրապետական» մարզադաշտում ժամը 21:00-ին: Այս մրցավէճը կը սպասարկի Մակեդոնիայի մրցավարական բրիգադը՝ Ալեքսանդար Ստավրեւի գլխաւորութեամբ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԴԱԹԵԱՆԸ ՊՐՈՆՁԷ ՄԵՏԱԼ ՆՈՒԱՃԵՑ ԱՇԽԱՐՀԻ ԾԻԴՊՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆՈՒՄ

Օգոստոսի 26-ին Հոլանդիայի Ռոտտերդամ քաղաքում մեկնարկած աշխարհի ճիւղային առաջնութիւնում պրոնզէ մետալի արժանացաւ Հայաստանի հաւաքականի անդամ Յովհաննէս Դաւթեանը (60կգ, Գիւմրի): Նա ժամանակից շուտ յաղթանակներ տարաւ Դիեգո Ռոդրիգեսի (Արգենտինա) Ջամշետ Խալիլովի (Տաշիկստան), Պիզեր Յասմանի (Կուբա) Պաւել Պետրիկովի (Չեխիա) եւ Վահիդ Սաուլախի (Իրան) նկատմամբ: 4-րդ փուլում Դաւթեանը տանուլ տուեց Հիրաօկա Հիրօակիին (Ճապոնիա), որի պատճառով գրկուեց եզրափակիչից եւ բաւարարուեց 3-րդ տեղով:

ԱՏՐՊԵՅԻՕՃԱՆԻ ԵՒ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՒԱՔԱԿԱՆՆԵՐԸ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻՆ ԵՐԵՒԱՆՈՒՄ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-13-Ը ԿԱՅԱՆԱԼԻՔ ԾԻԴՊՅԻ ԵՐՈՊՊԱՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆԸ

Ատրպէյճանի հաւաքականը վերահաստատել է Երեւանում Սեպտեմբերի 11-13-ը կայանալիք ճիւղային Եւրոպայի երիտասարդների առաջնութեանը մասնակցելու յայտը:

Ատրպէյճանի թիմը ներկայանում է հինգ մարզիկով: Թիմին ուղեկցում են երեք մարզիչներ մեկ մրցավար, թիմի ղեկավար եւ թիմի պաշտօնեայ, ինչպէս նաեւ բժիշկներ: Յայտում նշուած է նաեւ 2 լրագրողի մասնակցութեան մասին:

Ճիւղային Եւրոպայի երիտասարդների առաջնութեան մասնակցութեան յայտը վերահաստատել է նաեւ Թուրքիայի հաւաքականը: Նախնական յայտով տեղեկացուած էր 5 տղաների եւ 6 աղջիկների մասնակցութեան մասին:

Թէեւ Թուրքիայի ազգային հաւաքականը 2000 թուականին նոյնիսկ Օլիմպիական ախոյեան է ունեցել, այնուամենայնիւ, վերջին տարիների ցուցանիշներով հաւաքականը ամենաբարձր հորիզոնականները չի զբաղեցնում ճիւղային վարկանիշային աղիւսակում:

ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆԸ ՀՀ ԲՈՆՑՔԱՍԱՐՏԻ ՀԱՒԱՔԱԿԱՆԸ ԼՈՒՐՁ Է ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԵԼ

Երեւանից Իտալիայի Միլան քաղաք է մեկնել բռնցքամարտի Հայաստանի ազգային հաւաքականը՝ թիմի գլխաւոր մարզիչ Ռաֆայէլ Մեհրաբեանի եւ մարզիչ Կարէն Աղամալեանի ղեկավարութեամբ: Միլանի ռինգում հանդէս կը գան Հայաստանի 9 բռնցքամարտիկներ:

Ինչպէս Միլան մեկնելուց առաջ «Արմենպրես»-ին ասաց Ռ.Մեհրաբեանը, Հայաստանի բռնցքամարտիկները լաւ են նախապատրաստուել այս մրցաշարին: Ըստ նրա՝ նախընտրելի կը լինէր աւելի յաճախ ռինգում մրցել Եւրոպայի երկրների մարզիկների հետ, որոնց հետ Հայաստանի բռնցքամարտիկներն աւելի շատ են հանդիպել եւ ուժ ոճը շատ աւելի լաւ են ճանաչում: Ամերիկայի բռնցքամարտիկների հետ մարզական պրակտիկան այդքան հարուստ չէ, նոյնը՝ Քուպայի բռնցքամարտիկների հետ: Բռնցքամարտի Եւրոպայի վերջին առաջնութիւնում՝ Լիվերպոլում, Հայաստանի մարզիկներն անցեալ տարի սենսացիա գործեցին, նուաճելով 2 ոսկէ եւ 1 արծաթէ մետալ, նուաճելով թիմային 3-րդ տեղն Ուկրաինայի եւ Ռուսաստանի թիմերից յետոյ:

Այս առումով՝ Միլանում Հայաստանի բռնցքամարտիկների հանդէպ ուշադրութիւնը մեծ է լինելու: Հայաստանի բռնցքամարտիկներից հիմնական յոյսերը կապուած են 5 մարզիկների հետ՝ օլիմպիական խաղերի պրոնզէ մետալակիր՝ 60կգ քաշային Հրաչեա Զաւախեանի, Եւրոպայի ախոյեաններ՝ 48կգ քաշային Յովհաննէս Դանիլեանի, 64կգ քաշային Էդուարդ Համբարձումեանի, աշխարհի գաւաթակիր, 75կգ քաշային Անդրանիկ Յակոբեանի եւ Եւրոպայի փոխախոյեան, 91կգ քաշային Յովակ Անանիկեանի հետ:

Միլանի ռինգում, ըստ Հայաստանի բռնցքամարտի հաւաքականի մարզիչների, շատ սուր մրցակցութիւն է սպասուում: Աշխարհի առաջնութիւնը կը մեկնարկի Սեպտեմբերի 1-ին եւ կ'աւարտուի Սեպտեմբերի 12-ին:

ԱՐԹՈՒՐ ԱԲՐԱՅԱՍ - ԶԵՐՍԵՅՆ ԹԵՅԼՈՐ ՄՐՑԱՄԱՐՏԸ ԿԸ ԿԱՅԱՆԱՅ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-ԻՆ

«Showtime» հեռուստաընկերութեան կողմից պրոֆեսիոնալ բռնցքամարտի միջին քաշային կարգում կազմակերպուող գերմրցաշարի խմբային փուլի Արթուր Աբրահամ-Ջերմէյն Թեյլոր մենամարտի օրը կրկին փոխուել է եւ կը կայանայ ոչ թէ Հոկտեմբերի 10-ին, ինչպէս սկզբից յայտարարուել էր, այլ 17-ին: «Zauerland Event» եւ «Anschutz Entertainment» ընկերութիւններն արդէն վերջնականապէս համաձայնեցրել են մրցամարտի ժամկետն ու վայրը. մենամարտը կը կայանայ Բեռլինում:

Յիշեցնենք, որ Ա. Աբրահամը փոխել է քաշային կարգը՝ անցնելով միջին քաշային կարգ, եւ այդ պատճառով էլ հրաժարուել է IBF վարկածով աշխարհի ախոյեանի կոչումից:

ՆՈՐ ՄԵՐՈՒՆԴ
 ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ
 ԺԱՍՆԱԿԱՅՈՅՑԸ

CHARTER CABLE 280-ՐԳ ԿԱՅԱՆ
 (ԿԼԵՆՏԵՅԼ, ՊԵՐՊԵՆՔ, ԼԱ ՔՐԵՍԵՆԹԱ)
 GLOBACAST SATELLITE
 ՀԻՆԳՇԱՔԹԻ ԵՐԵՎԱՆԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00

ՔԱԶ ՆԱԶԱՐ
 ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ
 Ամէն Կիրակի երեկոյեան
 Ժամը 10:00-ից 12:30
 Կլէնտէյլի 280-րդ կայանից

ՇՆՈՐԱԴՈՐՈՒԹԻՒՆԸ

Օր. ՎԱՆԻԱ ԵԱՂՍԸԶԵԱՆ ԸՆԴ ՊՐՆ. ՄԻՔԱՅԷԼ ՇԱՆԼԻ
 Ամուսնացեալք
 29 Օգոստոս, 2009

Լոս Անճելոս

Մեր ջերմ շնորհաւորութիւնները եւ երջանիկ նոր կեանքի բարեմաղթութիւնները նորապսակ գոյգին եւ անոնց ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար՝ Տէր եւ Տիկ. Վարդան եւ Քաթիա Եւաղաբեանին:

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION

presents

ARMENIAN INDEPENDENCE DAY FESTIVAL

SUNDAY, SEPTEMBER 20, 2009

VERDUGO PARK, GLENDALE

11:00 AM - 7:00 PM



FREE ADMISSION
ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ

Live Entertainment
Dance • Arts & Drafts
Food • Kid's Games
Backgammon Tournament

Երգ ու Պար
Արուեստի Գործեր
Փոքրերու Խաղեր
Նարտիի Մրձաշարք
Համադամ Գաշեր